ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Երևան - 2011

Սույն զեկույցը մշակվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից ստեղծված փորձագիտական խմբի կողմից:

ISBN: 978-92-9235-888-4

Սույն զեկույցը պատրաստվել և հրատարակվել է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի աջակցությամբ: Հրապարակման մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները պատկանում են հեղինակներին և կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....5
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....19
1. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 21
1.1 Ազգային փոքրամասնությունների ներկա կազմը Հայաստանի Հանրապետությունում.....21
1.2 Մարդահամար 2011.....28
1. 3 Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և ազգային փոքրամասնությունների իրավունքները.....30
2. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ.....35
2.1 Ազգային փոքրամասնությունների մշակութային իրավունքների ապահովումը ՀՀ-ում.....35
2.2 Ազգային փոքրամասնությունների կրոնական իրավունքների ապահովումը.....42
2.3 Ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների ապահովումը.....46
2. 4 Ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովումը կրթության ոլորտում.....53
2.5 Ազգային փոքրամասնությունների սոցիալ- տնտեսական իրավունքները.....60
2. 6 Ազգային փոքրամասնությունների քաղաքական իրավունքները.....62
2.7 Պատասխանատվությունը ռասայական խտրականության դրսևորման համար.....63

3. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....66

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով...»: Սույն սկզբունքը սահմանված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածում և հանդիսանում է մարդու իրավունքների հարգման կարևոր ու անհրաժեշտ նախապայման: Նույն փաստաթղթի 2–րդ հոդվածը սահմանում է, որ «Ամեն ոք ունի այս Հռչակագրում ներկայացված բոլոր իրավունքներն ու ազատություններն առանց որևէ խտրականության՝ հիմնված ցեղային, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, ունեցվածքի, դասային պատկանելիության կամ որևէ այլ կարգավիճակի վրա»:

Նշված դրույթը բովանդակում է երկու կարևոր բաղադրիչներ. նախ հավասարության սկզբունք՝ հռչակագրի բոլոր շահառուների, յուրաքանչյուր մարդու համար, և պարունակում պարտավորություն իրավակիրառողի համար՝ պարտավորություն խտրականության բացառման համար բոլոր նախապայմաններ ստեղծելուն: Այս մոտեցումն իր արտացոլումն է գտել նաև ՄԱԿ-ի կանոնադրության նախաբանում, որտեղ նշվում է, որ «սույն պայմանագրի դրույթները կիրառվում են բոլոր անձանց նկատմամբ՝ անկախ ռասայի, սեռի, լեզվական կամ կրոնական պատկանելիության տարանջատման»:

Հավասարության և խտրականության բացառման սկզբունքները միմյանց հետ սերտորեն փոխկապակցված կատեգորիաներ են, և մեկի խախտումը կամ անարգումը տրամաբանորեն հանգեցնում է մյուսի խախտմանը: Խտրականության բացառման և հավասարության սկզբունքներն արտացոլված են մարդու իրավունքներին վերաբերող գրեթե բոլոր աղբյուրներում՝ որպես մարդու իրավունքների առավել բովանդակային և հիմնարար իրավունքներից մեկը: Ժամանակակից քաղաքակիրթ, ժողովրդավարական յուրաքանչյուր պետություն պետք է որդեգրի նշված սկզբունքներին հետևելու քաղաքականություն: Խտրականության բացառման սկզբունքը, ինքնին հանդիսանալով ավտո-

նում մարդու իրավունք, միևնույն ժամանակ հանդիսանում է բաղադրիչ էլեմենտ այլ իրավունքների համար: Այն անհերքելիորեն ձեռք է բերել մարդու իրավունքների իրավունքի հիմնարար կանոնի կարգավիճակ: Խտրականության բացառման սկզբունքն ինչպես ուղղակիորեն ձևակերպված է մարդու իրավունքների հիմնարար փաստաթղթերում, այնպես էլ անուղղակիորեն բխում է «մարդու որոշ անհատական իրավունքների» բովանդակությունից, որը սովորաբար ամրագրված է հետևալ տարածված ձևակերպմամբ՝ «յուրաքանչյուր ոք», կամ «ոչ մեկ չի կարող»: Պատահական չէ, որ խտրականության բացառման սկզբունքը ճանաչված է որպես սովորութային նորմ և ունի jus cogens կարգավիճակ: Այսպես, երբ ասում ենք յուրաքանչյուր ոք ունի կրթության, ընտրության և այլ իրավունքներ, դրանց հիմքում ընկած է անձանց իրավահավասարության սկզբունքը՝ խտրական վերաբերմունք բացառելու պահանջը:

Խտրականության բացառման սկզբունքի տրամաբանական շարունակություն է հանդիսանում ազգային փոքրամասնությունների միջազգային իրավական պաշտպանությունը: Ազգային փոքրամասնությունների իրավական պաշտպանությունը գտնվում է միջազգային իրավունքի առանձնակի ուշադրության ներքո հիմնականում այն պատճառով, որ ազգային փոքրամասնությունները, գոյատևելով պետության տարածքում, որտեղ ապրում են դոմինանտ էթնիկ միավորներ, բախվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ բարդությունների, որոնք չհաղթահարելը կարող է վտանգել այդ էթնիկական խմբի գոյատևումը և հետագա զարգացումը: Այս իսկ պատճառով յուրաքանչյուր պետություն, որը հանդիսանում է միջազգային հանրության լիիրավ անդամ և որը վավերացրել է Մարդու իրավունքներին վերաբերող հիմնական ակտերը ոչ միայն պետք է ձեռնամուխ լինի խտրականության բացառմանը, այլ նաև պարտավոր է ստեղծել լրացուցիչ նախապայմաններ ազգային փոքրամասնությունների ազգային ինքնության, ավանդույթների, սովորույթների պահպանմանը և զարգացմանը: Խտրականության հասկացության սահմանման առաջին փորձերը կատարվել են ՄԱԿ-ի շրջանակներում՝ Խտ-

րականության կանխման և փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովում: Այդ ենթահանձնաժողովի կողմից 1947 թվականին ներկայացվեց խտրականության հետևալ սահմանումը. «Խտրականություն է համարվում ցանկացած գործողություն, որը հիմնված է այս կամ այն մարդու անձնական հատկանիշի, արժանիքի կամ կոնկրետ վարքագծի հետ կապ չունեցող բնական կամ սոցիալական կատեգորիաների անհավասարության վրա»: Հետագայում նույն ենթահանձնաժողովի կողմից ներկայացվեց նաև «խտրականության կանխարգելման» սահմանումը, որը ներառում է հետևալը. «Խտրականության կանխարգելումը դա առանձին անհատներին կամ նրանց խմբերին իրավահավասար դրությունից զրկող ցանկացած միջոցների կանխարգելումն է»:

Ինչ վերաբերում է բուն «ռասայական խտրականության» սահմանմանը, ապա այն կարելի է բնութագրել որպես իրավահավասարության սկզբունքին հակասող՝ անձանց սոցիալական և իրավական դրության մեջ տարբերություն, որը հիմնված է միմիայն անձի այս կամ այն ռասային պատկանելու ֆիզիկական գործոնի վրա:

1965 թվականի Կոնվենցիայի տեքստում ընդգրկվեց ռասայական խտրականության այնպիսի բնորոշում, որը որպես խտրականության օբյեկտ նշում է նաև ազգային և էթնիկական խմբերին: Կոնվենցիայի 1-ին կետում նշվում է. «Սույն Կոնվենցիայում «ռասայական խտրականություն» հասկացությունը նշանակում է ռասայի, մաշկի գույնի, ցեղային, ազգային կամ էթնիկական ծագման հատկանիշների հիմքով ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որոնք ունեն քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները չեղյալ հայտարարելու կամ դրանց ճանաչումը, օգտագործումը կամ իրականացումը նվազեցնելու նպատակ կամ հանգեցնում են նման հետևանքների: Կոնվենցիայում ռասայական խտրականության բնորոշման մեջ անձի իրավունքների սահմանափակ-

ման հետ մեկտեղ նշվում է նաև ռասայական, էթնիկական և ազգային ծագման վրա հիմնված առավելությունների մասին:

Փաստորեն այս Կոնվենցիայի կարևորագույն առավելությունն այն է, որ ռասայական խտրականության հասկացության մեջ ներառվեց ազգային, էթնիկական, կրոնական խտրականությունը, այսինքն կոնվենցիան իր պաշտպանության տակ առավ նաև ազգային, էթնիկական, կրոնական և լեզվական խմբերին: Դա նշանակում է, որ Կոնվենցիայի կողմերն իրենց կամքն են արտահայտել պայքարելու անհավասարության դեմ, որը արտահայտվում է ինչպես անմիջականորեն խտրականության (մեկի իրավունքների նվազեցում մյուսների համեմատ), այնպես էլ առավելությունների ձևով (մյուսների համեմատ ավելի նպաստավոր վիճակ սահմանելը): Պետք է նշել նաև նման բնորոշման մեկ այլ արժանիքը. արգելելով բոլոր տեսակի առավելությունները որպես իրավահավասարության բացառում՝ միևնույն ժամանակ թույլ է տալիս առանձին դեպքերում այն անձանց կամ մարդկային խմբերին, որոնք տվյալ պահին մյուսների համեմատ գտնվում են հատկապես անբարենպաստ պայմաններում, տրամադրել առավել արտոնյալ իրավունքներ: Խոսքը, մասնավորապես, գնում է ազգային փոքրամասնությունների իրենց գոյատևման, զարգացման, ազգային ինքնության պահպանման համար լրացուցիչ իրավունքների սահմանման մասին:

Ազգային փոքրամասնությունների հիմնահարցն ավելի լուրջ մտահոգության առարկա դարձավ տարբեր տարածաշրջաններում առկա կոնֆլիկտային իրավիճակների և ճգնաժամերի հետևանքով: Մասնավորապես Խորհրդային Միության փլուզումը և Հարավսլավիայի տրոհումը առաջ բերեցին միջէթնիկական հակասությունների նոր դրսևորումներ, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների նոր համայնքների ձևավորում, որոնց իրավունքների պաշտպանության ուղղությամբ անհրաժեշտ է մշակել հատուկ ռազմավարություն:

Հաճախ ազգային փոքրամասնությունների իրավունքների ոտնահարումը պետության ներսում առաջացնում է լուրջ բարդություններ և որոշ դեպքերում հանգեցնում ողբերգական

հետևանքների: Այդ իսկ պատճառով միջազգային հանրությունը և առանձին պետություններն իրենց հերթին պետք է ձեռնամուխ լինեն ստեղծելու պետության ներսում բնակվող ազգությունների համատեղ գոյատևելու համար բարենպաստ պայմաններ: Պետությունները, որպես միջազգային իրավական նորմաստեղծ գործընթացի սուբյեկտներ, հատուկ պատասխանատվություն են կրում ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովման հարցում: Ըստ էության, ազգային փոքրամասնություններն ընդհանուր առմամբ ունեն սահմանափակ հնարավորություններ՝ ներազդելու պետության ներսում իրենց հանդեպ իրականացվող քաղաքականության վրա, որն էլ պայմանավորում է միջազգային հանրության գործուն մասնակցության անհրաժեշտությունը: Դա է պատճառը, որ միջազգային կառույցների շրջանակներում ընդունված ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանն ուղղված փաստաթղթերը նախատեսում են նաև վերահսկողության որոշ մեխանիզմներ: Այսպես, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 27-րդ հոդվածի համաձայն՝ «Այն պետություններում, որտեղ գոյություն ունեն ազգային, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններ, դրանց պատկանող անձանց չի կարող մերժվել նույն խմբի այլ անդամների հետ համատեղ իրենց մշակույթից օգտվելու, իրենց կրոնը դավանելու և դրա ծեսերը կատարելու, ինչպես նաև մայրենի լեզուն օգտագործելու իրավունքը:»:

Այսպիսով, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը երաշխավորվում է ինչպես մարդու իրավունքների ընդհանուր համատեքստում՝ խտրականության բացառմամբ, այնպես էլ՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար «հատուկ իրավունքների» սահմանմամբ՝ նախատեսելով ազգային փոքրամասնությունների ինքնության պահպանման համար որոշ լրացուցիչ առավելություններ, լրացուցիչ երաշխիքներ:

Մինչ սույն վերլուծության բուն առարկայի ուսումնասիրմանն անցնելը, նպատակահարմար ենք համարում նախ ներկայացնել «ազգային փոքրամասնություն» եզրույթի սահմանումը:

Պետք է փաստել, որ ազգային փոքրամասնությունների միասնական սահմանում միջազգային իրավունքում առ այսօր չկա, չնայած այն հանգամանքին, որ միջազգային կառույցները բազմիցս անդրադարձել են սույն հարցի իրավական կարգավորմանը: Այսպես օրինակ՝ Միջազգային արդարադատության մշտական պալատը դեռևս 1930 թվականին փորձել է շարադրել ազգային փոքրամասնությունների սահմանումը հետևալ ձևակերպմամբ. «անձանց մի խումբ, որը բնակվում է մեկ պետության կամ տարածաշրջանի շրջանակում, որոնք պատկանում են միևնույն ռասային, ունեն միևնույն կրոնը, լեզուն և ավանդույթները, և որոնց միավորում է փոխադարձ ձգտումը՝ պահպանելու այդ ավանդույթները, կրոնը, լեզուն, իրենց զավակների կրթությունն իրենց ռասային, կրոնին և ոգուն համահունչ»:

Մեկ այլ բնորոշմամբ՝ ազգային փոքրամասնությունը, ի տարբերություն պետության բնակչության հիմնական զանգվածի, նվազ քանակություն ունեցող, դոմինանտ դիրք չզբաղեցնող խումբ է, որի անդամները հանդիսանում են սույն պետության քաղաքացիներ՝ օժտված էթնիկական, կրոնական, լեզվական բնութագրիչներով, որոնք բնորոշ են միայն իրենց, և որոնք ջանում են պահպանել իրենց ինքնությունը և միասնականությունը: Իդեպ, տարբեր միջազգային փաստաթղթեր փոքրամասնությունների ներքո ընդգրկում են տարբեր հատկանիշներով օժտված խմբերի: Այսպես օրինակ՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրում նշվում է «էթնիկական, կրոնական, լեզվական փոքրամասնություն», այլ փաստաթղթերում նշվում է միայն «ազգային փոքրամասնութուններ[1]» տերմինը: Սակայն ընդհանուր գնահատմամբ պետք է փաստել, որ հաճախ կիրառվելիք ազգային փոքրամասնության սամանումն ավելի ընդգրկուն է, քանի որ ներառում է և՛ լեզվական, և՛ էթնիկական,

[1] Օրինակ: Article 21 of the Charter of Fundamental Rights of the European Union.

և՛ կրոնական փոքրամասնություններին՝ առանց սահմանազատելու: 1992 թվականի դեկտեմբերի 18-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց «Ազգային կամ էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին» հռչակագիրը: Սույն փաստաթղթի մշակման ժամանակ ևս կատարվեցին փորձեր՝ տալու ազգային փոքրամասնությունների սահմանումը, որը կլինի միասնական, սակայն, այնուհանդերձ, բոլոր կողմերի համար ընդունելի տարբերակ այդպես էլ չհնչեց: Առավել իրատեսական տարբերակն առաջ քաշվեց ավստրիական պատվիրակության կողմից, որը հնչում է հետևալ կերպ. «փոքրամասնություն է հանդիսանում անձանց մի խումբ, որը բնակվում է պետության տարածքում ոչ դոմինանտ դիրքերում, որոնց անդամները, լինելով տվյալ պետության քաղաքացի, ունեն էթնիկ, կրոնական, լեզվական առանձնահատկություններ, որոնք տարբերվում են բնակչության այլ զանգվածներից, և որոնք ունեն կամք՝ պահպանելու իրենց մշակույթը, ավանդույթները, կրոնը և լեզուն»:

Ընդհանրացնելով՝ կարելի է ասել, որ ազգային փոքրամասնություն է համարվում այն խումբը, որն ունի հետևալ հատկանիշները՝

- քանակապես ավելի փոքր է, քան բնակչության հիմնական զանգվածը,
- դոմինանտ դիրքեր չի զբաղեցնում,
- մշակույթը, լեզուն, կրոնը, ռասան տարբեր են բնակչության այլ հատվածի լեզվից, կրոնից, ռասայից, մշակույթից,
- ունի ցանկություն՝ պահպանելու իր ինքնությունը,
- անդամներն այն պետության քաղաքացիներն են, որտեղ նրանք փոքրամասնություն են կազմում:

Որոշ հեղինակներ նաև նշում են նրանց՝ տվյալ պետությունում բնակվելու հարատևությունը, որպեսզի շփոթություն չառաջանա նորեկ միգրանտների հետ, որոնք չեն կարող հավակնել փոքրամասնության տիտղոսին:

Այլ կերպ ասած, ազգային փոքրամասնությունների կարգավիճակը որոշվում է ոչ միայն որոշակի առանձնահատուկ

հատկանիշների ընդհանրությամբ, ինքնության առկայությամբ, այլ նաև այդ խմբային պատկանելիության բարձր գիտակցմամբ: Բացի այդ, ազգային փոքրամասնությունների սահմանումը կիրառելի է միայն պետականություն ունեցող միավորումների նկատմամբ, որտեղ կա հիմնական էթնիկական բնակչություն: Այլ կերպ ասած, որևէ ազգային միավորներ, անկախ նրանց քանակական կարողություններից, որոնք գոյատևում են քաղաքական դոմինանտ էթնիկական պատկանելիություն չունեցող միջավայրում, կորցնում են իրենց՝ վերը նշված իմաստը: Այսինքն ազգային փոքրամասնությունները ձևավորվում են միայն պետական միավորների շրջանակներում:

Ինչ վերաբերում է ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը, ապա պետք է նշել, որ նրանք ավանդաբար բաժանվում են երկու խմբի՝

- իրավունքներ, որոնք ունեն ՀՀ բոլոր քաղաքացիները,
- իրավունքներ, որոնք ունեն ազգային փոքրամասնության ներկայացուցիչները և որոնք նպաստում են իրենց մշակութային, կրոնական, կրթական իրավունքների իրականացմանը, ազգային ինքնության, սովորույթների, ավանդույթների պահպանությանը:

Պետք է նշել, որ կատարվել էր փորձ՝ մշակելու օրենքի նախագիծ, որը կվերաբերի Հայաստանում «ազգային փոքրամասնություն» իրավական կարգավիճակին: Համաձայն նախագծի՝ «ազգային փոքրամասնություն» որակվելու համար պետք է համապատասխանել երկու կարևոր պայմանների: Մասնավորապես, ըստ առաջարկվող օրենքի նախագծի, Հայաստանի՝ 2000 մարդ ունեցող որևէ բնակավայրի 15 տոկոսը կազմող կամ դիֆուզ երկրի տարածքում բնակվող 3000 հոգի կազմող և առնվազն 50 տարի Հայաստանում ապրող համայնքն է համարվում ազգային փոքրամասնություն և իր ինքնությունը պահպանելու ու զարգացնելու հարցում կարող է ակնկալել պետության օժանդակությունը:

Ինչպես տեսնում ենք, սույն օրենքի նախագծով սահմանված չափանիշներն այդքան էլ չեն բխում միջազգային փաս-

տաթղթերով նախատեսված չափանիշներից և ըստ էության կամային են, մասնավորապես՝ թվային չափանիշների առումով: Եվ պատահական չէ, որ սույն օրենքի նախագիծը ոչ միանշանակ ընդունվեց ինչպես միջազգային փորձագիտական շրջանակների, այնպես էլ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից:

Նախագիծը չստացավ հետագա զարգացում, քանի որ Հայաստանում բնակվող մոտ 11 ազգային փոքրամասնություններից ոչ բոլորն էին կողմ այս օրենքի ընդունմանը: «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը մշակվելուց հետո ներկայացվեց ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին՝ իրենց դիտողությունների և կարծիքների համար: Քննարկումներից հետո նախագիծը լուրջ փոփոխությունների ենթարկվեց, որից հետո որոշվեց ընդհանրապես սառեցնել գործընթացը, քանի որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները չեկան համաձայնության որոշ հարցադրումների կապակցությամբ:

Այն տեսակետը, որի համաձայն՝ առանձին իրավական ակտի մշակման կարիք չկա , քանի որ այլ օրենսդրական ակտերն ընդգրկում են բոլոր դրույթները, որոնք վերաբերում են ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը և արտահայտում ազգային փոքրամասնության շահերը, մեր համոզմամբ թյուր է: Ազգային փոքրամասնության իրավունքների պաշտպանությունը կամ խրախուսումը դուրս է զուտ խտրական վերաբերմունքի բացառումից, այն ընդգրկում է նաև ազգային ինքնության պահպանման համար հատուկ պայմանների ստեղծման անհրաժեշտություն, որն առաջացնում է առանձնակի իրավական կարգավորման անհրաժեշտություն, այդ իսկ պատճառով միասնական իրավական ակտի առկայությունը խրախուսելի է և ցանկալի:

Բացի այդ, ազգային փոքրամասնությունների վերաբերյալ միասնական ակտի ընդունումը հնարավորություն կընձեռի լուծելու այն բացերը, որոնք առկա են ոլորտում և տալու գործնական լուծումներ այն հարցադրումների կապակցությամբ, որոնք

տեղ չեն գտել այլ իրավական ակտերում: Ազգային փոքրամասնությունների իրավունքների արդյունավետ պաշտպանության համար մեծ կարևորություն է ներկայացնում նաև համապատասխան ինստիտուցիոնալ համակարգի առկայությունը:

Այդ ինստիտուտների շարքում իր կարևորությամբ առանձնանում է Համակարգող խորհուրդը, որը հանդիսանում է ազգային փոքրամասնությունների հետ խորհրդակցական մարմին: Հանրապետության Նախագահի խորհրդականին կից Ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների համակարգող խորհրդը, ստեղծվել է 2000 թվականի մարտին Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների համագումարի արդյունքում: Հետագայում՝ 2000 թվականի հունիսի 15-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահն իր կարգադրությամբ հավանություն տվեց Համակարգող խորհրդի ստեղծմանը:

Համակարգող խորհրդի անդամներն ընտրվում են հետևյալ կերպ. Հայաստանի Հանրապետությունում առկա 11 ազգային փոքամասնություններից առաջադրվել են երկուական ներկայացուցիչ, որոնք ներկայացնում են յուրաքանչյուր համայնքի տարբեր կազմակերպություններ: Եթե համայնքն ունի մեկ հասարակական կազմակերպություն, ապա երկու անդամն էլ ընտրվում են տվյալ կազմակերպությունից, իսկ եթե համայնքում առկա են երկու կամ ավելի հասարակական կազմակերպություններ, ապա Համակարգող խորհրդի անդամներ են ընտրվում այդ համայնքը ներկայացնող տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից: Այսպիսով, Համակարգող խորհուրդն ունի 22 անդամ, որոնց կազմը փոփոխվում է:

Համակարգող խորհրդի հիմնական գործառույթներն են հանդիսանում ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների աջակցությունն ու պաշտպանությունը, ազգային փոքրամասնությունների իրավունքներին առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը, ազգային փոքրամասնությունների իրավունքների և

ազատությունների առնչությամբ իրավական ակտերի նախագծերի քննարկումը, վերլուծությունը և առաջարկությունների պատրաստումը, ազգային փոքրամասնությունների կրթական-մշակութային ծրագրերին առնչվող հարցերի քննարկումը:

Պետական մարմինների համակարգում ազգային փոքրամասնությունների հարցերով գործառույթներ իրականացնելու իրավասությամբ է օժտված ՀՀ կառավարության աշխատակազմի Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը, որը համակարգում է ազգային փոքրամասնությունների և կրոնի ոլորտները:

Վարչությունը, հանդիսանալով գործադիր իշխանության մարմին, իրականացնում է ազգային փոքրամասնություններին վերաբերող իրավական ակտերի նախագծերի մշակում, իրականացնում առանձին հարցերի հետ կապված մասնագիտական փորձաքննություն, տալիս է եզրակացություններ ոլորտի զարգացման, գործունեության արդյունավետության բարելավման վերաբերյալ, իրականացնում կոնկրետ միջոցառումներ ոլորտի կատարելագործման և առկա խնդիրների լուծման ուղղությամբ:

2008 թվականի հունիսի 1-ին Նախագահի հրամանագրով ստեղծվեց Հանրային խորհուրդը, որի շրջնակներում ձևավորվեց ազգային փոքրամասնությունների իրավուքների հանձնաժողով: Դա նշանալից և կարևոր քայլ էր ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտի ինստիտուցիոնալ համակարգը բարելավելու ուղղությամբ:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների հանձնաժողովի հիմնական նպատակն ազգային փոքրամասնությունների իրավական դրության բարելավումն է ՀՀ-ում: Այդ նպատակով այն իրականացնում է հետևալ գործառույթները. ուսումնասիրում և վերլուծում է ազգային փոքրամասնությունների իրավունքների իրացման ընթացքը ՀՀ-ում, կազմակերպում ազգային փոքրամասնությունների և փոքրամասնությունների լեզուների իրավունքների մասին իրազեկման տեղեկատվական թեմատիկ հաղորդումներ, ներկայացնում կոնկրետ իրավունքների իրացման ընթացքի վերլուծություններ, առաջարկություններ, մաս-

նակցում տեղերում իրավիճակի վերլուծություն և իրավունքների իրազեկում անելու նպատակով ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածքներ այցելություններին և այլն: Ենթահանձնաժողովի կարևոր գործառույթներից է, որ այն իրավասու է հավաքելու ազգային փոքրամասնությունների իրավական հարցերով դիմումները, քննարկելու դրանք ՀՀ իրավական պետական կառույցների հետ և խորհրդատվություն տրամադրելու դիմորդներին: Հանձնաժողովը բաղկացած է երեք ենթահանձնաժողովից՝ Կրթության, մշակույթի, լրատվամիջոցների, երիտասարդության և սպորտի ենթահանձնաժողով, Ազգային փոքրամասնությունների իրավունքների ենթահանձնաժողով, Սոցիալ-տնտեսական հարցերի հանձնաժողով: Հանձնաժողովի ընդհանուր անդամների թիվը կազմում է 77, որի կազմի մեջ ընդրգված են տարբեր համայնքների ներկայացուցիչներ[2]:

Կարելի է փաստել, որ ըստ էության ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ համակարգը ՀՀ-ում ձևավորված է պատշաճ մակարդակով: Միևնույն ժամանակ պետք է փաստել, որ սույն մարմինների փոխհարաբերակցման եզրերը, գործառույթները կարիք ունեն որոշակի հստակեցման:

ՀՀ պետական բյուջեից ազգային փոքրամասնություններին սկսած 2000 թվականից ամեն տարի հատկացվում է 10 մլն դրամ: Այս գումարը հավասարապես բաշխվում է ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների միջև: Ամեն տարի բյուջեի հավելվածում նշվում է գումարի բաշխման մեխանիզմը: Այսպես օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի թիվ 1 հավելվածի՝ ազգային փոքրամասնություններին պետական աջակցության նպատակով նախատեսված հատկացումները բաշխելու մասին ծրագրի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 10 մլն. դրամը սահմանվել, բաշխվել է Հան-

[2] Տե՛ս՝ http://www.publiccouncil.am/subcommittees.php?ci=12&type=1&l=2.

բապետության ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների միջև՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԷԹՆԻԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

1	2	3	4	5
NN ը/կ	Էթնիկ համայնքը	Կազմակերպության անվանումը	Բանկի անվանումը և հաշվի համարը	Պահանջվող գումարը(դրամ)
1.	Ասորական	Հայաստանի «Աթուռ» ասորիների ասոցիացիա	Հայէկոնոմբանկ, 163048120741	409.000
		Ասորական«Աշուր» երիտասարդական կենտրոն	Յունիբանկ, 24124000620500	409.000
2.	Բելառուսական	Հայաստանի «Երևանի բելառուսների համայնք «Բելառուս»» հասարակական կազմակերպություն	Արդշինինվեստբանկ, 247010017991	818.000
3.	Գերմանական	«Տևտոնիա» գերմանացիների մշակութային հասարակական կազմակերպություն	Կոնվերսբանկ, 1930026634280100	818.000
4.	Եզդիական	«Եզդիների ազգային միություն» հասարակական կազմակերպություն	Արդշինինվեստբանկ, 2470100046920000	618.000
		«Եզդիների ազգային կոմիտե» հասարակական կազմակերպություն	Հայէկոնոմբանկ, 163058181153	200.000

5.	Լեհական	Լեհերի համագործակցության «Պոլոնիա» բարեգործական հասարակական կազմակերպություն	«HSBC», 001-133255-001	818.000
6.	Հունական	Հունական հասարակական կազմակերպությունների միություն	Հայէկոնոմբանկի Թումանյանի մասնաճյուղ, 163188103481	818.000
7.	Հրեական	«Հայաստանի հրեական համայնք» հասարակական կազմակերպություն	Յունիբանկ, 24100100675800	272.690
		Հայաստանի հրեական կրոնական համայնք	Ամերիաբանկ, 1570001148250100	545.310
8.	Ռուսական	«Սլավոնական տուն» հասարակական կազմակերպություն	Արդշինինվեստբանկ, 010020888	818.000
9.	Վրացական	«Վրացական «Իվերիա» համայնք» բարեգործական հասարակական կազմակերպություն	Հայէկոնոմբանկ, 163008136661	818.000
10.	Ուկրաինական	««Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն	Ամերիաբանկ, 1570001167470300	820.000
11.	Քրդական	«Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» հասարակական կազմակերպություն	«Անելիք բանկ» ՓԲԸ-ի Աբովյանի մասնաճյուղ, 118031024318	818.000
12.	Ընդհանուր ծախսեր	Համակարգող խորհուրդ,	Ամերիաբանկ, 157000116747030	1.000.000

		«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն	0	
	Ընդամենը			10.000.000

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության բացառման սկզբունքն իր արտացոլումն է գտել մարդու իրավունքներին վերաբերող գրեթե բոլոր ունիվերսալ միջազգային փաստաթղթերում, մասնավորապես Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրում, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում, ինչպես նաև հատուկ նշանակության փաստաթղթերում, ինչպիսիք են Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան, Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոնվեցիան, Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան և այլն: ՀՀ-ը միացել է վերոհիշյալ բոլոր միջազգային պայմանագրերին և ստանձնել համապատասխան պարտավորություններ՝ դրանք ի կատար ածելու ուղղությամբ:

Սույն զեկույցի հիմնական առարկան ՀՀ-ում բնակվող ազգային փոքրամասնությունների իրավական կարգավիճակի, իրավունքների և նրանց ապահովման եղանակների ուսումնասիրումը և վերլուծությունն է: Այդ նպատակով ուսումնասիրման են ենթարկվել այն միջազգային-իրավական փաստաթղթերը, որոնց միացել է ՀՀ-ը, ինչպես նաև ազգային օրենսդրության այն հիմնական դրույթները, որոնք վերաբերում են ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովմանը: Առանձնակի ուշադրություն է հատկացվում այն ծրագրերին և միջոցառումներին, ո-

րոնք իրականացվել են Հայաստանի Հանրապետության կողմից ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովման և խրախուսման համար վերջին ժամանակահատվածում: Հատուկ ուշադրություն է դարձվում նաև այն զարգացումներին և գործընթացներին, որոնք առկա են հատկապես սոցիալական, մշակութային, կրթական իրավունքների ապահովման բնագավառներում: Նշված ոլորտներում առկա ձեռքբերումները և խնդիրները ներկայացվում են՝ հիմք ընդունելով ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ տեղի ունեցած քննարկումները և արծարծված հարցադրումները:

Այնուհանդերձ սույն զեկույցի հիմնական նպատակն է կատարված ուսումնասիրությունների և վերլուծության ընթացքում վեր հանված խնդիրների լուծման և բացերի լրացման ուղղությամբ համապատասխան քաղաքականության մշակումը՝ համապատասխան առաջարկությունների տեսքով, որոնք կնպաստեն ազգային փոքրամասնությունների իրավական կարգավիճակի բարելավմանը ՀՀ-ում:

Հայաստանում ազգային փոքրամասնությունների իրավունքների գնահատման համար իրականացվել է որակական սոցիոլոգիական հետազոտություն, որն ընդգրկում էր հարցազրույցներ փորձագետների, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների, պետական գերատեսչությունների ներկայացուցիչների հետ: Բացի այդ, վերլուծությունը նախապատրաստվել է՝ հիմք ընդունելով առկա իրավական դաշտը, ինչպես նաև ՀՀ-ում առկա փաստացի վիճակը:

Կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- *Փաստաթղթերի վերլուծության մեթոդ*: Վերլուծվել են միջազգային պայմանագրերը, որոնց մասնակցում է ՀՀ-ը, ՀՀ օրենսդրությունը, ՀՀ–ի կողմից միջազգային փաստաթղթերի կատարման կապակցությամբ ներկայացված զեկույցները, միջազգային կառույցների կողմից պատրաստված զեկույցները և եզրակացությունները:

- *Փորձագիտական հարցման մեթոդ*: Իրականացվել են հարցազրույցներ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների, պետական հաստատությունների ներկայացուցիչների, ոլորտի մասնագետների հետ և այլն:

Այսպիսով, օրենսդրական վերլուծությանը զուգահեռ իրականացվել են սոցիոլոգիական հետազոտություններ, հարցազրույցներ: Տեղեկությունների զգալի մասը հավաքվել է սոցիոլոգիական հարցումների, համապատասխան պետական հաստատություններին կատարած հարցումների, հրապարակային տեղեկատվության աղբյուրների, հասարակական և միջազգային կազմակերպությունների, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ կատարված բազմաթիվ հանդիպումների միջոցով:

1. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1.1 Ազգային փոքրամասնությունների ներկա կազմը Հայաստանի Հանրապետությունում

Իր անկախությունից ի վեր, Հայաստանը որդեգրեց միջազգային և եվրոպական կառույցներին և միջազգային հանրությանն ինտեգրվելու քաղաքականություն՝ մարդու իրավունքների և ազատությունների միջազգային չափանիշներին համահունչ: Այսպիսով, քաղաքակիրթ միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալու համար ՀՀ–ը վավերացրել է մի շարք միջազգային պայմանագրեր և ստանձնել պարտավորություն՝ կյանքի կոչելու այդ պայմանագրերով սահմանված դրույթները՝ ազգային օրենսդրությամբ պատշաճ մեխանիզմները ապահովելով:

Ըստ 2001 թվականի մարդահամարի տվյալների՝ ազգային փոքրամասնությունները կազմում են ՀՀ բնակչության 2.2 տոկոսը՝ 67 657 մարդ ՀՀ-ում: Ըստ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի՝ պաշտպանվում են ասորական, եզդիական, հունական, ռուսական և քրդական լեզուներով խոսող փոքրամասնությունների իրա-

վունքները: Սրանցից բացի, Հայաստանում կա ազգային 6 այլ փոքրամասնություն՝ ուկրաինացիներ, բելառուսներ, լեհեր, գերմանացիներ, վրացիներ և հրեաներ: ՀՀ-ում ինքնակազմակերպված գործում են շուրջ 11 էթնիկ համայնքների 50-ից ավելի հասարակական կազմակերպություններ, որոնց աշխատանքների մի մասն ուղղված է նաև մայրենի լեզուների պահպանությանն ու զարգացմանը: Ներկայումս գործում են ասորական, եզդիական, ռուսական, հունական, քրդական ուկրաինական, հրեական, լեհական, վրացական, բելառուսական, գերմանական էթնիկ համայնքների հասարակական կազմակերպությունները:

Տվյալները շատ տատանողական են, այսպես օրինակ՝ ըստ վերջին մարդահամարի նյութերի՝ Հայաստանում ապրում է ընդամենը 109 հրեա, որոնք ձևավորել են առնվազն երկու հասարակական կազմակերպություն և մեկ կրոնական համայնք, 1146 հույն, որոնք ձևավորել են մոտ մեկ տասնյակ հասարակական կազմակերպություն, իսկ օրինակ Հայաստանում ապրող 183 բուլղարները, 158 ինգուշները, 216 մոլդովացիները, 322 աբազները, 326 պարսիկները, շուրջ 200 ուդիները չեն ձևավորել որևէ հասարակական կազմակերպություն:

Պետք է արձանագրել, որ, ցավոք, հստակ տվյալներ որևէ կառույց չի կարող տրամադրել փոքրամասնությունների այժմյան թվի վերաբերյալ՝ ո՛չ պետական կառույցները, ո՛չ էլ ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունները: Որպես հիմք ծառայում է դեռևս 2001 թվականին ներկայացված մարդահամարի տվյալները, և բնական է, որ ներկայացված տվյալները չեն արտացոլում ներկա իրավիճակը, քանի որ այդ տվյալները ենթարկվել են փոփոխությունների մի շարք գործոնների ազդեցության ներքո: Մասնավորապես, պատճառները հետևյալն են՝

- Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից շատերը մեծ ուշադրություն չեն հատկացնում իրենց ազգային ինքնության պահպանությանը: Խոսքը մասնավորապես գնում է քաղաքներում բնակվող փոքրամասնությունների ներկայացուցիչների մասին, որոնք հաճախ չեն

պահում կապը համայնքի հետ, որը գրեթե անհնար է դարձնում նրանց հաշվառումը: Ի տարբերություն դրա՝ կոմպակտ բնակության վայրերում ազգային փոքրամասնությունների հաշվառումը մեծ բարդություն չի ներկայացնում:

- Ինչպես փաստում են զրույցներն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ, տարբեր համայնքների շատ ներկայացուցիչներ, ցանկանալով ինտեգրվել հասարակական կյանքի տարբեր բնագավառներում, ստանալ կրթություն, ձեռք բերել մասնագիտական որակավորում, հաճախ կամովին են զերծ մնում իրենց ազգային պատկանելիության լեզուն, կրոնը, ավանդույթները դավանելուց՝ գտնելով, որ այն կարող է խանգարել իրենց անձնային ձևավորմանը: Մասնավորապես, երբ խոսքը գնում է դպրոցական կրթության մասին, նույնիսկ կոմպակտ բնակության վայրերի որոշ դպրոցներում երեխաների ծնողները պնդում են անցկացնել հիմնական ուսումը միայն հայերեն, որպեսզի երեխաները ի վիճակի լինեն բավարար չափով տիրապետել հայերենին և հետագայում ստանալ կրթություն (օրինակ՝ եզդիները): Ինչ վերաբերում է քաղաքներում բնակվող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին, ապա պետք է փաստել, որ հաճախ դպրոցները չեն համալրվում բավարար թվով աշակերտներով, և դասարանները հետևաբար չեն գործում: Այս ամենը բնականաբար չի նպաստում ազգային փոքրամասնությունների ինքնության պահպանության գործընթացին:
- Հաջորդ պատճառը այն է, որ վերջին հաշվառումից հետո շարունակվում է արտագաղթը ՀՀ-ից և արտագաղթողների շրջանում կան նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ, մասնավորապես այն ազգային փոքրամասնությունների անդամներ, որոնք հնարավորություն ունեն մեկնելու իրենց էթնիկական պատկանելիության երկիր:

Բացի այդ, հիմնախնդիրն ավելի է բարդանում՝ ազգային փոքրամասնությունների հաշվառման հստակ մեխանիզմների բացակայության պատճառով: Պետական մարմինների հետ զրույցների ընթացքում պարզ է դառնում, որ սույն հարցը հանդիսանում է մտահոգության լուրջ առարկա, և ներկայումս այս կաաակցությամբ որևէ լուծում դեռևս չի նշմարվել:

Ակնհայտ է, որ ազգային այս կամ այն փոքրամասնությանը պատկանող անձանց առկա թիվը տարբերվում է Հանրապետությունում առկա իրական պատկերից: Խնդիրը հիմնականում կայանում է ազգային փոքրամասնությունների հաշվառման ընթացակարգում հստակության բացակայության մեջ: Այդ իսկ պատճառով, ազգային փոքրամասնությունների այս կամ այն համայնքի պատկանելիությունը որոշելիս մեծ կարևորություն է ներկայացնում հստակ չափանիշների որոշումը: Մասնավորապես նման չափանիշների առկայության անհրաժեշտությունն առավել ցայտուն է դառնում խառն ամուսնությունների դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ անձն ունի այլ պետության քաղաքացիություն:

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները մեր երկրի մարզերում և մայրաքաղաքում ապրում են հատվածաբար: Բնակելի առանձին վայրերում նրանք կա՛մ կազմում են խառը բնակչության մի մասը, կա՛մ բնակչության մեծամասնությունը: Առկա տեղեկատվության համաձայն Հայաստանում եզդիները կազմում են ազգային փոքրամասնության ամենամեծ զանգվածը: 2001 թվականի մարդահամարի նյութերով Հայաստանում բնակվում է 40620 եզդի, և նրանք կազմում են ՀՀ բոլոր ազգային փոքրամասնությունների ընդհանուր թվի 73 տոկոսը: Ընդ որում, եզդիներից 33207-ն ապրում են ՀՀ գյուղական բնակավայրերում, 7413-ը՝ քաղաքային բնակավայրերում: Գյուղական բնակավայրերում ապրող եզդիները ցրված են Արագածի, Թալինի տարածաշրջանի, ինչպես նաև Արմավիրի մարզի Ֆերիկ, Արտաշար, Զարթոնք (նախկին Ղամշլու), Նալբանդյան գյուղերում և Կոտայքի մարզի Զովունի գյուղում: Հայաստանի եզդիական համայնքը ձևավորել է մի շարք հասարակական կազմակերպություններ,

ունի երկու թերթ՝ «Լալըշ» և «Էզդիխանա՛»անուններով, հանրային ռադիոյով եթեր են տրվում ամենօրյա կես ժամանոց հաղորդումներ:

Հայաստանի ասորիները հիմնականում համախմբված են Արտաշատի Վերին Դվին և Դմիտրով, Արմավիրի մարզի Նոր Արտագերս և Կոտայքի մարզի Արզնի գյուղերում: Նրանց թիվն ըստ 2001 թվականի մարդահամարի նյութերի 3409 է: Ասորական գյուղերում պարբերաբար կազմակերպվում են ազգային, կրոնական ու մշակութային տոնահանդեսներ՝ ամեն տարի ապրիլի 1-ին տոնվող ասորական Նոր տարին, Շառա և Սուրբ Մարիամ տոները: Դրանք ուղեկցվում են բեմադրություններով, համույթների ելույթներով: Համայնքի անդամները խոստովանում են, որ կուզենային ունենալ պարարվեստի դասատուներ, տարազ, մարզամշակութային նոր օջախներ: Միևնույն ժամանակ միջոցները սակավ են և չունենալով լրացուցիչ օգնություն դրսից՝ այդ ծրագրերը շատ դժվար է կյանքի կոչել:

2001 թվականին 1176 հույներից 853-ն ապրում էին քաղաքներում, 323-ը՝ գյուղերում: Գյուղաբնակ հույների 1/3-ը՝119 մարդ, 60 և ավելի տարեկան են: Համայնքի ջանքերով Երևանում հիմնադրվել է հունական թեքումով դպրոց՝ թիվ 74, բացվել են կիրակնօրյա դասընթացներ՝ մեծերի և փոքրերի համար: Հունական համայնքն ապրում է մշակութային աշխույժ հետաքրքրություններով, մասնակցում ինչպես համապետական, այնպես էլ ազգային տոնակատարություններին: Պետք է փաստել, որ հունական համայնքի մշակութային և կրթական կյանքի առաջընթացները մեծապես պայմանավորված են ՀՀ-ում հունական դեսպանության գործուն մասնակցությամբ, որը համախմբում է համայնքի ներկայացուցիչներին:

Ինչ վերաբերում է ռուսական համայնքին, ապա պետք է փաստել, որ ՌԴ կողմից իրականացվող միջոցառումների շնորհիվ ռուս համայնքի խնդիրները հիմնականում գտնում են լուծում: Իդեպ, բավական ակտիվ են հասարակական կազմակերպությունները, որոնք տարբեր դրամաշնորհների միջոցով ծավալում են կրթամշակութային ծրագրեր և միջոցառումներ: Խոսքը

մասնավորապես գնում է այնպիսի կազմակերպությունների մասին, ինչպիսիք են «Ռոսիան», «Հարմոնիան», որոնք հաճախ իրականացնում են մասնավոր ծրագրեր: Միայն նախորդ երկու տարում համայնքում 100-ից ավելի միջոցառումներ են կազմակերպվել: Այդ միջոցառումների շարքում կարելի է նշել ռոմանսի միջազգային մրցույթը, Ռուսաստանի մշակույթի օրերը Հայաստանում, ռուսական կինոնկարների փառատոնը, երաժշտական երեկույթները և այլ հետաքրքիր նախաձեռնություններ: Նշենք, որ շատ միջոցառումներ կյանքի են կոչվում Ռուսաստանի հայերի միության աջակցությամբ: Ռուսական համայնքում այժմ գործում են «Օրֆեյ» և «Սոլնիշկո» պարախմբերը, որոնք համերգներով հանդես են գալիս տարբեր բեմահարթակներում: Այս համայնքում ավանդական են հանդիպումները ռուս և հայ արվեստագետների, դեսպանների ու քաղաքական գործիչների հետ:

Այսպես, «*Հարմոնիա*» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ կազմակերպվում են միջոցառումներ հայրենական պատերազմի մասնակիցների համար: Հատուկ ծրագրեր են իրականացվում երեխաների համար, կազմակերպվում են ճամբարներ, մշակութային միջոցառումներ, որոնց նպատակն է տարբեր ազգության երեխաներին միմյանց հետ հարաբերակցելը: Բավական ակտիվ գործնեություն է իրականացնում նաև «ՀՀ ռուսաստանցի *հայրենակիցների* օգնության և *աջակցության* հիմնադրամը»:

2001 թվականի մարդահամարի տվյալներով Հայաստանում ապրում են ընդամենը 1.519 քուրդ: Քրդերը, ինչպես ազգային մյուս փոքրամասնությունները, ունեն ազգային մշակույթն ու դիմագիծը պահպանելու հնարավորությունները: Նրանք ազգային լեզվով տպագրում են գրքեր, ձեռնարկներ, ունեն թերթ, ռադիոյով օրական կես ժամանոց հաղորդումներ և այլն:

Այլ փոքրամասնությունները մեծ թիվ չեն կազմում Հայաստանում: Իրենց լեհ համարող մարդկանց թիվը չի գերազանցում 100-ը: Էթնիկական հրեաների համայնքը, որը միշտ փոքր է եղել Հայաստանում, կազմված է 109 մարդուց: Գերմանացիների թիվը նույնպես միշտ փոքր է եղել: Այժմ Հայաստանում ապրում

են 133 գերմանացի: Բելառուսների թիվը մի փոքր ավելի շատ է. նրանց թիվը Հայաստանում 250-ից ավելի է: Մեծ չէ նաև ուկրաինացիների զանգվածը:

Պետք է փաստել, որ Հայաստանում էթնիկական փոքրամասնություններին պատկանող շատ ներկայացուցիչներ նախընտրում են խոսել ռուսերեն, հաճախում են ռուսական դպրոց, ինչպես օրինակ՝ հրեաները, լեհերը, ուկրաինացիները, ինչպես նաև որոշ հայեր, ասորիներ, վրացիներ և հույներ: Դա մեծապես պայմանավորված է իրենց էթնիկական պատկանելիության լեզուներով խոսող անձանց փոքր թվով:

Իդեպ, համաձայն «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու ցանկությամբ նրա անձնագրում կարող է կատարվել նշում ազգության մասին՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության կամ նրա տարածքային ստորաբաժանումների, իսկ օտարերկրյա պետություններում՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք, իրենց իրավունքների ոչ բավարար իմացության և կիրարկման պատճառով հաճախ չեն օգտվում այդ իրավունքից, որի հետևանքով հնարավոր չի լինում ամբողջական տեղեկատվություն հավաքագրել ազգային փոքրամասնությունների վերաբերյալ: Այդ իսկ պատճառով, շատ կարևոր է համապատասխան լիազորություններով օժտված աշխատակիցների իրազեկումը և նրանց վերապատրաստումը այս ուղղությամբ:

Այս խնդիրը կարող է լուծում ստանալ այն դեպքում, եթե ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հնարավորություն ունենան ծանոթանալու իրենց իրավունքներին, ինչպես նաև այն դեպքում, երբ անմիջական իրավակիրառող սուբ-

յեկտները պատշաճ պատրաստվածություն ունենան ազգային փոքրամասնությունների հիմնահարցերը կարգավորելիս:

1.2 Մարդահամար 2011

Ինչպես նշվեց, ՀՀ-ում վերջին մարդահամարը կատարվել է 2001 թվականին: Ազգային վիճակագրական ծառայությունը տրամադրել է մարդահամարի արդյունքների վրա հիմնված Հայաստանի Հանրապետության բնակչության կազմը՝ ըստ ազգությունների, քաղաքային/գյուղական բաշխումով:

Հայաստանում ներկայումս ապրում է ավելի քան 50 ազգության ներկայացուցիչ: Միաժամանակ, Հայաստանը համարվում է մոնոազգային երկիր, քանի որ հայերը կազմում են բնակչության 97 տոկոսը: Եթե 1988 թվականին ազգային և էթնիկ փոքրամասնությունները Հայաստանում կազմում էին ընդհանուր բնակչության 6.7 տոկոսը, ապա այժմ այդ թիվը, համաձայն 2001թվականի մարդահամարի տվյալների, նվազել է մինչև 2.2-2.3 տոկոս:

Բնակչությունը	հայեր	ասորիներ	եզդիներ	հույներ	ռուսներ	ուկրաինացիներ	քրդեր	այլ
3,213,011	3,145,354	3,409	40,620	1,176	14,660	1,633	1,519	4,640

* Վիճակագրական տվյալներ. Հայաստանի Հանրապետության բնակչության ազգային կազմը ըստ 2001 թվականի մարդահամարի տվյալների

Միաժամանակ, պետք է կրկին փաստել, որ սույն տվյալները չեն արտացոլում այսօրվա իրական պատկերը, քանի որ վերջին տարիներին տեղի է ունեցել ազգային և էթնիկ փոքրամասնությունների թվի նվազում՝ պայմանավորված ներազդման տարբեր գործոններով, որոնք վերը քննարկվել են:

Վերջին մարդահամարից հետո ազգային փոքրամասնությունների վերաբերյալ տվյալները չեն թարմացվել համապատասխան մեխանիզմների և լծակների բացակայության պատճա-

ռով: Ազգային և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ-ներն ապրում են հատվածաբար: Առանձին բնակելի վայրերում նրանք կա՛մ կազմում են խառը բնակչության մի մասը, կա՛մ բնակչության մեծամասնությունը: Ազգային փոքրամասնությունների համայնքները ևս չեն կարող տրամադրել տեղեկատվություն իրենց համայնքի ներկայացուցիչների մոտավոր թվի վերաբերյալ: Այդ իսկ պաճառով ներկա դրությամբ ազգային փոքրամասնությունների կազմի մասին հստակ տեղեկատվություն հնարավոր չէ տրամադրել:

«Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ-ում մարդահամարն անցկացվում է յուրաքանչյուր տասը տարին մեկ անգամ, սույն տարվա ընթացքում նախատեսվում է անցկացնել հերթական մարդահամարը: Հայաստանում երկրորդ մարդահամարը կանցկացվի 2011 թվականի հոկտեմբերի 12-21-ը: Ներկայումս իրականացվում են մարդահամարի անցկացման ուղղությամբ լուրջ նախապատրաստական աշխատանքներ: Նախնական տեղեկատվության համաձայն՝ բուն մարդահամարի արդյունքները կամփոփվեն 2013 թվականի վերջին:

Պետք է փաստել այն հանգամանքը, որ մարդահամարի անցկացման համար նախապատրաստված հարցաթերթիկում զետեղված հարցերը կարիք ունեն մեկնաբանման և հստակեցման, քանի որ իրարամերժ են և պահանջում են հստակ պատասխան: Մեր դիտարկմամբ հարցաթերթիկում կան հարցեր, որոնց դեպքում կարող են լինել նաև երկու պատասխան: Բացի այդ ազգության, կրոնի, լեզվի վերաբերյալ հարցերը պարտադիր են և սպառիչ: Այս հանգամանքը կարող է խնդիրներ առաջացնել Շրջանակային կոնվենցիայի 3–րդ հոդվածի հետ, որի համաձայն՝ «*Ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ պետք է ունենա այդպիսին համարվելու կամ չհամարվելու ազատ ընտրության իրավունք, և այդ ընտրությունը կամ այն իրավունքների իրականացումը, որոնք կապված են այդ ընտրության հետ, չպետք է տվյալ անձին դնեն անբարենպաստ պայմաններում*»:

Այդ իսկ պատճառով, ցանկալի է ազգության, լեզվի, կրոնի վերաբերյալ հարցերը դիտարկել որպես հայեցողական, ինչպես դա սահմանված է նաև Eurostat-ի ստանդարտներով, քանի որ անձը կարող է չցանկանալ հրապարակել իր էթնիկական պատկանելիությունը: Բացի դրանից, այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է խառն ամուսնությունների երեխաներին, անձը պետք է հնարավորություն ունենա ընտրելու մեկից ավելի տարբերակ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ազգային փոքրամասնությունների շրջանում կան մարդիկ, որոնք բավարար չափով չեն տիրապետում հայերենին, հարցերի պատասխանները կարող են չարտահայտել իրական պատկերը: Այդ իսկ պատճառով, մարդահամարի գործընթացը և արդյունքների ամփոփումը ճիշտ և արդյունավետ անցկացնելու համար ցանկալի է համապատասխան մարմինների կողմից նախապես բացատրական աշխատանքների անցկացում: Հնարավորության դեպքում ազգային փոքրամասնութունների համայնքների ներկայացուցիչների օգնությամբ ապահովել նաև հարցաթերթիկների թարգմանությունները:

Բացի դրանից, շատ խրախուսելի կլինի նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավվումը մարդահամարի անցկացման գործընթացին, մասնավորապես՝ կոմպակտ բնակության վայրերում: Հատկապես խրախուսելի կլիներ փոքրամասնությունների լեզուներով հարցաթերթիկների հնարավորությունը:

1. 3 Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և ազգային փոքրամասնությունների իրավունքները

Հայաստնի Հանրապետության ազգային փոքրամասնությունների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները պայմանավորված են ոչ միայն ներպետական օրենսդրության դրույթներով, այլ նաև այն միջազգային պայմանագրե-

րով, որոնց մասնակցում է Հայաստանի Հանրապետությունը, և որոնք նախատեսում են վերջիններիս իրավունքների ապահովման երաշխիքներ և վերահսկողության մեխանիզմներ:

Խտրականության բացառման սկզբունքն ընկած է յուրաքանչյուր իրավունքի իրականացման հիմքում և նախատեսված է ինչպես միջազգային փաստաթղթերով, այնպես էլ ազգային օրենսդրության դրույթներով: Միևնույն ժամանակ, այն միջազգային պայմանագրերը, որոնք վերաբերում են բացառապես ազգային փոքրամասնությունների իրավական կարգավիճակին, դուրս են գալիս զուտ խտրականության բացառման սկզբունքի շրջանակներից՝ սահմանելով նաև լրացուցիչ պարտավորություններ պետությունների համար, ազգային փոքրամասնությունների ինքնության ավանդույթների պահպանության համար: Պետք է նշել, որ նրանք նախատեսում են նաև համապատասխան վերահսկողական մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմել այն իրավիճակի մասին, որն առկա է պետության տարածքում:

Նրանց շարքում առանձնահատուկ տեղ է գրավում «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիան, որն ընդունվել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 1994 թվականի նոյեմբերի 10-ին: Հայաստանի Հանրապետությունն «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիան ստորագրել է 1997 թվականի հուլիսի 25-ին՝ վերջինիս 27-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Նախարարների կոմիտեի հրավերով, երբ դեռևս Եվրոպայի խորհրդի անդամ չէր: Կոնվենցիան վավերացվել է 1998 թվականի փետրվարի 17-ին: Հայաստանի Հանրապետության համար կոնվենցիան ուժի մեջ է մտել 1998 թվականի նոյեմբերի 1-ին: Կոնվենցիայի պահանջի համաձայն՝ 2001 թվականից ի վեր Հայաստանը պարբերաբար Եվրոպայի խորհրդին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության զեկույցն ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին: Ազգային զեկույցի ուսումնասիրության շրջանակում Խորհրդատվական կոմիտեի պատվիրակությունն այցելում

է Հայաստան՝ կառավարության ներկայացուցիչներից, ինչպես նաև հասարակական կազմակերպություններից և այլ անկախ աղբյուրներից Շրջանակային կոնվենցիայի կատարման վերաբերյալ հետագա տեղեկատվություն ստանալու համար։ Այնուհետև, անհրաժեշտության դեպքում, Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում է իր մեկնաբանություններն «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ կարծիքի կապակցությամբ։ 2009 թվականին Հայաստանի Հանրապետությունը «Ազգայինփոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի կատարման վերաբերյալ Եվրոպայի խորհրդին է տրամադրել երրորդ զեկույցը։ Եվրոպայի խորհրդի փորձագիտական խումբն այցելել է ՀՀ սույն թվականի հուլիսին և կատարել իր ուսումնասիրությունները՝ գնահատելով զեկույցում ներկայացված տեղեկատվությունը։ Հաջորդ կարևոր փաստաթուղթը՝ «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան», որն ուժի մեջ է մտել 1998 թվականի մարտի 1-ից, որից չորս տարի անց Խարտիային միացավ նաև ՀՀ-ը (Հայաստանի Հանրապետությունն այն վավերացրել է 2001 թվականի դեկտեմբերի 28-ին, որն ուժի մեջ է մտել 2002 թվականի մայիսի 1-ից)։ Խարտիայի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ 2003 թվականից ի վեր Հայաստանը պարբերաբար Եվրոպայի խորհրդին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության զեկույցը Խարտիայի դրույթների կատարման մասին։ Ազգային զեկույցի ուսումնասիրության շրջանակում Փորձագիտական կոմիտեի պատվիրակությունն այցելում է Հայաստան՝ կառավարության ներկայացուցիչներից, ինչպես նաև հասարակական կազմակերպություններից և այլ անկախ աղբյուրներից Խարտիայի կատարման վերաբերյալ հետագա տեղեկություն ստանալու համար։ Այնուհետև, անհրաժեշտության դեպքում, Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում է իր մեկնաբանությունները Փորձագիտական կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ կարծիքի կապակցությամբ։

2007 թվականին Հայաստանի Հանրապետությունը «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի» կատարման վերաբերյալ Եվրոպայի խորհրդին է տրամադրել իր երկրորդ զեկույցը: Իսկ 2009 թվականինթ. ստացել է այդ զեկույցի կապակցությամբ Փորձագիտական կոմիտեի կարծիքը: Հաջորդ պայմանագիրը «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան է, որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1993 թվականի հունիսի 23-ին: Սույն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն ստեղծված է Ռասայական խտրականության վերացման կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե): Համաձայն 9-րդ հոդվածի մասնակից պետությունները պարտավորվում են Կոմիտեի կողմից քննարկման համար Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ներկայացնել զեկույց իրենց ընդունած օրենսդրական, դատական, վարչական կամ այլ միջոցների մասին, որոնց օգնությամբ կենսագործվում են սույն Կոնվենցիայի դրույթները: Հաջորդ փաստաթուղթը «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրն է՝ ընդունված 1966 թվականի դեկտեմբերի 16-ին: Սույն Դաշնագիրը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1993 թվականի հունիսի 23-ին: Դաշնագրի 28-րդ հոդվածի համաձայն ստեղծվել է Մարդու իրավունքների կոմիտե (Կոմիտե): 40-րդ հոդվածի համաձայն՝ Կոնվենցիային մասնակից պետությունները պարտավորվում են զեկույցներ ներկայացնել Կոմիտեին սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների իրականացման ուղղությամբ իրենց ձեռնարկած միջոցների և այդ իրավունքների օգտագործման ասպարեզում ձեռք բերած առաջընթացի մասին:

Վերոհիշյալ միջազգային պայմանագրերի ուժով ՀՀ-ը ձեռնամուխ եղավ նախաձեռնել մի շարք օրենսդրական փոփոխություններ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածը, «Միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածը երաշխավորում են միջազգային պայմանագրի գերակայությունն ու անմիջական կիրարկումը: «Իրավա-

կան ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության օրենքներն ու իրավական այլ ակտերը պետք է համապատասխանեն միջազգային իրավունքի համընդհանուր նորմերին ու սկզբունքներին»: Հանրապետության փոփոխված Սահմանադրությունը, այսպիսով, որդեգրել է ներպետական օրենսդրության մեջ միջազգային պայմանագրային դրույթների ուղիղ փոխակերպման եղանակը: Այսինքն՝ սահմանադրական դրույթի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են և գերակա են ներպետական օրենքների հանդեպ: Այսպես, խտրականության բացառման սկզբունքն արտահայտված է նաև ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածում, որը սահմանում է՝ «բոլորը հավասար են օրենքի առջև և խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, լեզվից, կրոնից, գենետիկական հատկանիշներից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելիությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 41-րդ հոդվածը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունք: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունքը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 26-29-րդ հոդվածները, ինչպես նաև համապատասխան օրենքները երաշխավորում են մտքի, խղճի, կրոնի, համոզմունքների, խաղաղ հավաքներ և միավորումներ կազմելու ազատության ու ազատ արտահայտվելու մարդու և քաղաքացու իրավունքները: Իսկ 47-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է սահմանափակում, մասնավորապես՝ «արգելվում է իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կար-

գը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով»:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովմանն ու խտրականության բացառմանը վերաբերող դրույթներ նախատեսված են նաև ներպետական այլ իրավական ակտերով, որոնք կքննարկվեն ստորև:

2. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

2.1 Ազգային փոքրամասնությունների մշակութային իրավունքների ապահովումը ՀՀ-ում

Ազգային փոքրամասնությունների ինքնության պահպանման կարևորագույն տարրերից է հանդիսանում իր ազգության մշակութային ավանդույթներին հավատարիմ մնալը: Սույն պահանջը նախատեսված է նաև «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշպանության շրջանակային կոնվենցիայում», որի 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Կողմերը պարտավորվում են նպաստել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք նրանց անհրաժեշտ են իրենց մշակույթը պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև ինքնության հիմնական տարրերը՝ կրոնը, լեզուն, ավանդույթները և մշակութային ժառանգությունը պահպանելու համար»:

2002 թվականին ընդունված «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետությունն աջակցում է իր տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնությունը պահպանելուն ու զարգացնելուն:

Ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանման և աջակցման նպատակով միջոցառումներ են նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-

2012թ.-ի գործունեության միջոցառումների ծրագրի «4.4.4. Մշակույթ» բաժնի «9. Համագործակցություն Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների հետ» կետով, որի նպատակն է պահպանել ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնությունը և ներգրավել Հայաստանի մշակութային դաշտին՝ ազգային փոքրամասնությունների լեզուներով ոչ պետական մամուլի և գրականության տպագրման, փառատոնների կազմակերպման, կրոնական և էթնիկ համայնքների հուշարձանների վերականգման և ժամանակակից արվեստի զարգացմանն աջակցության միջոցով:

Հայաստանի կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի N565-Ա որոշման համաձայն՝ իշխանություններն ազգային փոքրամասնությունների մշակութային կենտրոնին տրամադրել են տարածք, որը զբաղեցնում է երկու հարկ Երևանի կենտրոնում գտնվող շենքերից մեկում: Շենքը վերանորոգվել է 2006 թվականին և բացվել 2007 թվականին: Այն այժմ էլ ազգային փոքրամասնությունների կողմից օգտագործվում է որպես մշակութային կենտրոն՝ կազմակերպելու համար տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ուսուցումը, մշակութային գործունեությունը և այլն: Բացի մշակութային միջոցառումներից, որոնք կազմակերպվում են տարբեր համայնքների կողմից, կենտրոնում գործում են նաև կիրակնօրյա դպրոցներ:

Հայաստանի Հանրապետության համար հատուկ նշանակություն ունեցող պետական ծրագրերի շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը մշակել է մի շարք կարևորագույն ռազմավարական ծրագրեր: Դրանցից է Ազգային անվտանգության ռազմավարության (հաստատվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի հրամանագրով) դրույթների հիման վրա մշակված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ապահովմանն ուղղված Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության գործունեության ուղղությունները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը և Հայաստանի Հանրապե-

տության կառավարության 2008-2012թ.թ.-ի Ծրագիրը (Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից հաստատվել է 2008 թվականի ապրիլի 30-ին)։ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարական դրույթներով նախատեսված մշակույթի ոլորտի միջոցառումների ծրագրի 6-րդ կետը վերաբերում է Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների պատմական, հոգևոր, մշակութային արժեքների և էթնիկական ինքնության պաշտպանությանը և նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքականությունն ազգային փոքրամասնությունների ոլորտում խարսխվում է երեք հիմնարար սկզբունքների վրա. ա) նպաստել էթնիկ ինքնության պահպանմանը և էթնիկ մշակույթի զարգացմանը, բ) կանխարգելել էթնիկ որևէ խտրականություն, գ) նպաստել Հայաստանի հասարակության մեջ ոչ հայազգի բնակչության լիարժեք ինտեգրմանը։

Պետք է փաստել, որ ՀՀ-ում մշակութային ինքնության ապահովման համար ստեղծված են բարենպաստ պայմաններ։ Այսպես օրինակ՝ Հայաստանում լույս են տեսնում եզդիական «-Լալըշ», «Էզդիխանա», «Շանգալ», քրդական «Ռյա թազա» (Նոր ուղի), ուկրաինական «Դնիպրո», ռուսական «Ռեսպուբլիկա Արմենիա» «Ուրարտու», «Գոլոս Արմենիի», «Նովոյե վրեմյա» թերթերը, «Լիտերատուրնայա Արմենիա» հանդեսը և հունական «Բյուզանդական ժառանգություն» ամսագիրը։ ՀՀ-ում տպագրվում են նաև հրեական համայնքի «Մագեն Դավիթ» թերթը՝ ռուսերեն։ 2007 թվականից սկսել է լույս տեսնել քրդական «Զազրոս» նոր պարբերականը։

ՀՀ ազգային գրադարանում Խարտիայի անդամ 5 ազգությունների լեզուներով պահվում են մոտ 450 հունարեն, 2000 քրդերեն ու եզդիերեն գրքեր, ասորերեն գրականություն չկա։ Վերջին տարիների ընթացքում գրադարանի ֆոնդերը համալրվել են ուկրաիներեն 35, լեհերեն 75, հունգարերեն 21, քրդերեն 17, հունարեն 470, վրացերեն 5, եզդիերեն 1 միավոր և այլ լեզուներով գրված գրքերով։

Ինչ վերաբերում է 2011 թվականին տպագրվելիք մամուլին, ապա պետական բյուջեով սահմանված են հատկացումներ հետևալ թերթերին և ամսագրերին՝

«Եզդիների ազգային միություն» ՀԿ , «Էզդիխանա»
«Եզդիների ազգային կոմիտե» ՀԿ, «Լալեշ»
«Ռյա-Թազա» թերթի խմբագրություն» ՍՊԸ, «Ռյա-Թազա»
«Գոլոս» ՍՊԸ, «Գոլոս Արմենիի»
«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» ՀԿ, «Դնիպրո-Սլավուտիչ»
«Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» ՀԿ, «Զագրոս»
«Հայաստանի հրեական համայնքի թերթ» ՀԿ, «Դավիթի վահան»
«Իվերիա» վրացական բարեգործական համայնք» ՀԿ, «Իվերիա»
«Նովոյե վրեմյա» օրաթերթի խմբագրություն» ՍՊԸ, «Նովոյե վրեմյա»
Հայաստանի հույների «Պատրիդա» ՀԿ, «Բյուզանդական ժառանգություն»
«Լիտերա» ՍՊԸ, «Լիտերատուրնայա Արմենիա»
«Լեհական միություն Հայաստանում «Պոլոնիա» բարեգործական» ՀԿ, «Պոկա մի ժիվի»

Իշխանությունները և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հաստատում են համագործակցություն՝ ուղղված տարվա երկու ազգային փառատոնների՝ «Ազգային փոքրամասնությունների կերպարվեստի, դեկորատիվ և կիրառական արվեստների ցուցահանդեսի» և «Ազգային փոքրամասնությունների մանկական երաժշտության փառատոնի» կազմակերպմանը:

Չնայած այն հանգամանքին, որ Ազգային փոքրամասնությունների կրթամշակութային գործունեությանն աջակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյու-

ջեում յուրաքանչյուր տարի նախատեսվում են ֆինանսական միջոցներ, որոնք հասանելի են բոլոր ազգային փոքրամասնություններին, այնուհանդերձ, պետք է փաստել, որ այդ միջոցները բավական չեն լուրջ միջոցառումների անցկացման համար: Ինչպես փաստում են ազգային փոքրամասնութունների ներկայացուցիչների դիտարկումները, այդ միջոցների բաշխումը տարբեր համայնքների միջև կատարվում է ոչ խելամիտ եղանակով: Մասնավորապես, բյուջեից տրամադրվող գումարները տրամադրվում են հավասար մասերով ազգային փոքրամասնությունների համայքներին, սակայն որոշ ազգային փոքրամասնությունների համայքներն ունեն մեկից ավել հասարակական կազմակերպություն, որի դեպքում գումարի չափը դառնում է չնչին և անհնար դարձնում լուրջ միջոցառումների անցկացումը: Որոշ համայքներն էլ ստանում են լուրջ աջակցություն այլ երկրներից և մասնավոր հիմնադրամներից: Այդ իսկ պատճառով, մեր համոզմամբ, նպատակահարմար կլիներ գնահատել համայքներից յուրաքանչյուրի պահանջները, կարողությունները, եկամուտի այլ աղբյուրները, որից հետո կատարել բյուջետային հատկացումներ:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության տարեկան և միջնաժամկետ ծախսային ծրագրերում «Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը» ծրագրի «Աջակցություն ազգային փոքրամասնությունների մշակույթին» ենթածրագրով ամեն տարի նախատեսվում են բյուջետային հատկացումներ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների մշակութային միջոցառումներին աջակցելու նպատակով: Մասնավորապես, վերոնշյալ ենթածրագրով 2007 թվականին նախատեսվել էր 700,000 դրամ, 2008 թվականին՝ 1,800,000 դրամ, իսկ 2009 թվականի բյուջեով՝ 2,300,000 դրամ:

2008 թվականին սկսված հատուկ ծրագրերից է ազգային փոքրամասնությունների գրականության հրատարակումը: Մասնավորապես, հրատարակվել է «Ազգային փոքրամասնությունների ստեղծագործողների գրական ալմանախը», որտեղ ներկայացվել են ազգային փոքրամասնությունների ստեղծագործողները,

ինչի համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից 2008 թվականին տրամադրվել է 950,000 դրամ: 2009 թվականին ազգային փոքրամասնությունների գրականության հրատարակման ուղղությամբ նախատեսվում էր 540,000 դրամ (տրամադրվող գումարի նվազումը պայմանավորված է երկրի տնտեսական իրավիճակով):

Հայաստանի ազգային գրադարանում ազգային փոքրամասնությունների լեզուներով պահվում և օգտագործվում են մոտ 450 հունարեն, 686 քրդերեն և բազմահազար ռուսերեն գրքեր: Այդ լեզուներով գրականություն կա նաև Հանրապետության այլ գրադարաններում, իսկ ռուսերենով՝ նաև դպրոցական գրադարաններում: Ինչպես հիշյալ, այնպես էլ այլ փոքրամասնությունների լեզուներով (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններից վրացերենի, ուկրաիներենի, բելառուսերենի, գերմաներենի, լեհերենի) զգալի ծավալի գրականություն կա Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի և համապատասխան գիտահետազոտական ինստիտուտների գրադարաններում:

ՀՀ մշակույթի նախարարության ֆինանսավորմամբ Երևանում և մարզերում ազգային փոքրամասնությունների բոլոր համայնքների մասնակցությամբ ավանդաբար անցկացվում են գեղարվեստի և դեկորատիվ կիրառական արվեստի ցուցահանդես և երաժշտական փառատոն:

Պետք է փաստել, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները մեծ մասամբ բնակվում են Հայաստանի Հանրապետության մարզերում: Ամեն մարզի նկատմամբ ցուցաբերվում է տարբերակված մոտեցում՝ կախված տվյալ մարզում բնակվող ազգային փոքրամասնության առանձնահատկություններից և հիմնախնդիրներից: Վերոհիշյալ ծրագրերի կազմման աշխատանքներին ներգրավվում են ազգային փոքրամասնությունների միությունների ներկայացուցիչները:

Ըստ էության, գյուղական համայնքներում մշակութային կյանքն այնքան էլ ակտիվ չէ: Համայնքներում մշակութային միջոցառումները ֆինանսավորվում են գյուղական համայնքների բյու-

ջեի հաշվին, որն ամբողջ երկրի տարածքում, ընդհանուր առմամբ, փոքր գումար է կազմում: Այն հիմնականում չի բավականացնում, մշակույթի տները շատ վատ վիճակում են, շատ քիչ գյուղերում կան երգի, պարի համույթներ, երաժշտական գործիքներ: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ նախատեսվում է Հայաստանի Հանրապետության մարզերում գործող մշակույթի տների վերականգնման պետական ծրագիր, որը կնպաստի նաև մշակութային կյանքի աշխուժացմանը և հասարակության ներգրավմանը մշակութային գործունեության մեջ:

Ինչպես փաստում են զրույցները, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ մշակութային կյանքի զարգացման համար կարծես թե նախադրյալներ ստեղծված են, սակայն բացակայում են միջոցառումներ իրականացնելու համար նյութական միջոցներ կամ այլ խթաններ, որոնք հետաքրքրություն և ձգտում կառաջացնեն մասնավորապես երիտասարդների շրջանակներում: Այստեղ ազգային փոքրամասնություններից շատերը փաստում են, որ շատ դժվար է նախաձեռնել որևէ միջոցառում, քանի որ չկան բավարար խրախուսիչ հանգամանքներ և մոտիվացիա դրանց անցկացնելու համար:

Պետք է նշել, որ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարական դրույթներով նախատեսված մշակույթի ոլորտների միջոցառումների շարքում կարևոր տեղ են զբաղեցնում Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների պատմական, հոգևոր, մշակութային արժեքների և էթնիկական ինքնության պաշտպանության համար նախատեսվող միջոցառումները, որոնք նախատեսված են կյանքի կոչվել մինչ 2012 թվականը, մասնավորապես.

1) տարբեր ոլորտներում քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքներին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկում և մասնակցություն,

2) ազգային փոքրամասնությունների լեզուներով մամուլին տրամադրվող աջակցության ընդլայնում,

3) ազգային փոքրամասնությունների լեզվամշակութային առանձնահատկությունների լուսաբանում, այդ թվում՝ նաև

զանգվածային լրատվամիջոցներով ազգային փոքրամասնությունների ոչ նյութական մշակութային ժառանգության (հեքիաթներ, պարեր, ավանդույթներ և այլն),

4) կրոնական և էթնիկ համայնքների հուշարձանների վերականգնում, մշակույթի տարբեր ոլորտներում քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքներին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկում և մասնակցություն:

2.2 Ազգային փոքրամասնությունների կրոնական իրավունքների ապահովումը

Կրոնի ազատությունը հանդիսանում է մտքի, խղճի, դավանանքի ազատության միջազգային իրավական նորմի տրամաբանական շարունակությունը, որը նախատեսված է մարդու իրավունքներին վերաբերող մի շարք միջազգային իրավական պայմանագրերում, որին միացել է ՀՀ-ը, մասնավորապես՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 18-րդ հոդված՝ « 1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այդ իրավունքն ընդգրկում է իր ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը և միանձնյա կամ այլոց հետ համատեղ և հրապարակավ, կամ մասնավոր կարգով, իր կրոնը կամ համոզմունքը պաշտամունքի, արարողությունների, ծեսերի և քարոզչության միջոցով արտահայտելու ազատությունը», իսկ Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք, այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն»:

Այսպիսով, խղճի, դավանանքի և համոզմունքի ազատության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է.

ա) ՀՀ Սահմանադրությունից,

բ) ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերից,

գ) «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» և «Հայաստանի Հանրապետության և Առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքներից,

դ) խղճի, դավանանքի, համոզմունքի ազատությունը և կրոնական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող այլ օրենքներից ու իրավական ակտերից:

2009թ. փետրվարի 2-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների կողմից ներկայացվեցին առաջարկություններ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «-Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների վերաբերյալ: Կատարված լրացումների նպատակն էր համապատասխանեցնել նշված օրենքը 2005 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և, մասնավորապես, 26-րդ հոդվածին, որում սահմանված է. «Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը: Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների համար»:

2009 թվականի դրությամբ Հայաստանում գրանցված է 13 կրոնական հոսանք ներկայացնող 66 հասարակական կազմակերպություն:

Հայաստանի Հանրապետության կրոնական ազգային փոքրամասնությունների
կրոնական կազմակերպություններն են.

- «Ռուս ուղղափառ եկեղեցու Երևան քաղաքի Ս. Տիրամոր եկեղեցու ուղղափառ համայնք»,
- «Ռուս ուղղափառ եկեղեցու Գյումրի քաղաքի Ս. Նիկոլայ Հրաշագործի եկեղեցու ուղղափառ համայնք»,
- «Ռուս ուղղափառ եկեղեցու Վանաձոր քաղաքի Ս. Աստվածածնի Ծննդյան եկեղեցու ուղղափառ համայնք»,
- «Ռուս ուղղափառ եկեղեցու Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով գյուղի Կիրիկ և Իուլիտա Սբ. Նահատակների եկեղեցու ուղղափառ համայնք»,
- «Հայաստանի եզդիների (Շարֆադինի) հետևորդներ կրոնական կազմակերպություն»,
- «Հայաստանի Հանրապետության եզդիների ազգային «Շեխի Շեխու Բաքրաե» համայնք»,
- «Հայաստանի հրեական կրոնական համայնք»,
- «Արևելքի ասորական կաթողիկոսության սուրբ առաքելական եկեղեցի» Հայաստանի ասորական կրոնական կազմակերպություն[3]:

Երևանում անարգել գործում է, ինչպես նաև վերականգվել և վերանորոգվել է պարսկական Կապույտ մզկիթը: Առանց պետական գրանցման գործում են նաև Լոռու մարզում գտնվող մոլոկանների երկու համայնքները՝ Ֆիոլետովո և Լերմոնտովո գյուղերում:

2004 թվականից սկսած ամեն տարի, ներառյալ նաև այս տարի, դպրոցների ամառային հանգստյան և ճամբարների կազմակերպման ընթացքում Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմը հրավիրում է ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին՝ նրանց երեխաների հան-

[3] Եվրոպայի խորհրդի «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության երրորդ զեկույց, 2009 թ.:

գիստն այդ ճամբարներում հայ երեխաների հետ միասին անցկացնելու։ Երեխաների հանգիստը հայ ջոկատավարների հետ միասին կազմակերպում են նաև ազգային փոքրամասնության ներկայացուցիչները։
2009 թվականից սկսած Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը ևս մասնակցում է այդ միջոցառման կազմակերպական աշխատանքներին։

ՀՀ-ում գործող կրոնական միավորումները (կրոնական կազմակերպություններ և խմբեր կամ համայնքներ)՝ իրենց իրավական և փաստական կարգավիճակով կարելի է բաժանել երեք մասի.
ա) որպես կրոնական կազմակերպություններ գրանցված միավորումներ,
բ) որպես հասարակական կազմակերպություն գրանցված, սակայն կրոնական պրակտիկա իրականացնող կամ աշխարհում որպես կրոնական հայտնի խմբեր,
գ) պետական գրանցում չունեցող, սակայն գործող կրոնական, աշխարհայացքային կամ փիլիսոփայական, վարքականոնային խմբեր, որոնց իրավական կարգավիճակը դեռևս սահմանված չէ ՀՀ օրենսդրությամբ։

Միջազգային առաքելությունների դիտարկումները վկայում են այն մասին , որ ազգային փոքրամասնությունները Հայաստանում ազատ են դավանելու իրենց կրոնը և այդ ոլորտում որևէ լուրջ խոչընդոտի չեն հանդիպում: Սակայն դա չի նշանակում, որ նշված ոլորտում խնդիրներ չկան, մասնավորապես կապված այսպես կոչված «ոչ ավանդական կազմակերպությունների» գործունեության հետ: Նշված խնդիրը բազմիցս բարձրացվել է տարբեր միջազգային իրավապաշտպան կառույցների կողմից և անշուշտ համակարգված լուծումներ է պահանջում: Սակայն սույն հետազոտության մեջ մենք չենք անդրադառնում այդ խնդիրներին, քանի որ նրանք ըստ էության չեն վերաբերում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը, այլ

հանդիսանում են խղճի ազատության ապահովման ինքնուրույն և բարդ հիմնահարց:

2.3 Ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների ապահովումը

Պետք է փաստել, որ ՀՀ գործող օրենսդրությունը որևէ արգելք չի նախատեսում փոքրամասնությունների լեզուների գործածման ոլորտում, ինչպես նաև օրենսդրական կամ գործնական միջոցներ չի նախատեսում կամ իրականացնում, որոնք ուղղված լինեն որևէ լեզվի պահպանմանը կամ զարգացմանը վնասելուն կամ վտանգելուն: 2002 թվականին ընդունված «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի մի շարք հոդվածներ ուղղված են ազգային փոքրամասնությունների և լեզուների իրավունքներին: Մասնավորապես, 8-րդ հոդվածը նշում է. «ՀՀ-ն աջակցում է իր տարածքում բնակվող փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանը, պետական ծրագրերի իրականացման միջոցով նպաստում է նրանց կրոնի, ավանդույթների, լեզվի, մշակութային ժառանգության, մշակույթի պահպանման, տարածման և զարգացման համար պայմանների ստեղծմանը»: 2002 թվականին սահմանվեց Լեզվաքաղաքականության պետական ծրագիր, որի համաձայն՝ լեզվական և մշակութային բազմազանության նկատմամբ հարգանքը, ազգային փոքրամասնությունների լեզվի և մշակույթի զարգացման խրախուսումը միջազգային ասպարեզում ՀՀ վարկն ապահովող պայմաններից է: Լեզվաքաղաքականության պետական ծրագրի 7-րդ բաժինը վերնագրված է «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովումը լեզվի բնագավառում»: Որպես այդ բնագավառի հիմնախնդիրներ են նշված հետևյալները.

ա) Ազգային փոքրամասնությունների լեզուները ՀՀ լեզվամշակույթի անբաժան մասն են, նրա հարստությունը: Այդ լեզուների նկատմամբ պետական հոգածությունը մեր երկրի ժողովրդավա-

բացման հետագա ընթացքի և քաղաքացիական հասարակության զարգացման համար ունի հանգուցային նշանակություն։
բ) ՀՀ քաղաքացիների իրավունքները լեզվի բնագավառում երկբնույթ են՝ ազգային և հասարակական։ Ազգային մակարդակում ապահովվում է մայրենի լեզվի իմացության, դրանով կրթվելու և այն գործածելու իրավունքը, հասարակականում՝ պետական լեզվի՝ հայերենի իմացության և գործածության՝ ՀՀ բոլոր քաղաքացիների իրավունքն ու պարտականությունը։
գ) Որոշ ազգային փոքրամասնությունների՝ ազգային ինքնության պահպանմանը պետականորեն սատարելը շահեկանորեն կարող է ավելի կամրջել մեր երկիրը այդ ժողովուրդների հայրենի պետությունների հետ։

Որպես ծրագրային գործողություններ նշված են.
ա) համակողմանի աջակցություն ազգային փոքրամասնությունների լեզուների պահպանմանն ու զարգացմանը,
բ) աջակցությունն ազգային փոքրամասնությունների միջև արդյունավետ լեզվական հաղորդակցմանն ու փոխըմբռնմանը՝ Եվրախորհրդի լեզվաքաղաքական նորմերին համապատասխան,
գ) մայրենի լեզվով կրթություն և դաստիարակություն ստանալու՝ ազգային փոքրամասնությունների իրավունքի ապահովման նպատակով տվյալ ազգության մտավորականության գիտամանկավարժական ներուժի ներգրավումը,
դ) աջակցությունն ազգային փոքրամասնությունների լեզուների ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման աշխատանքներին։

Սահմանադրության 41-րդ հոդվածի համաձան՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունք։ Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք»։ Սույն սկզբունքը ձևավորվեց մեծապես «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի» ազդեցության ներքո, որն ուժի մեջ է մտել 1998 թվականի մարտի 1-ից, որից չորս տարի անց այն ուժի մեջ մտավ նաև ՀՀ-ում (Հայաստա-

նի Հանրապետությունն այն վավերացել է 2001 թվականի դեկտեմբերի 28-ին, որն ուժի մեջ է 2002 թվականի մայիսի 1-ից)։ «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ եվրոպական խարտիան» նախատեսում է վերահսկողական մեխանիզմ՝ գնահատելու համար, թե ինչպես է Խարտիան կիրառվում անդամ պետությունում՝ նպատակ ունենալով անհրաժեշտության դեպքում նրանց օրենսդրությունը, քաղաքականությունը և պրակտիկ գործունեությունը բարելավելու հանձնարարականներ տալ ։ Այս ընթացակարգի կենտրոնական բաղադրիչը Փորձագետների կոմիտեն է՝ հաստատված Խարտիայի 17-րդ հոդվածի համաձայն։

Խարտիայի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ 2003 թվականից ի վեր Հայաստանը պարբերաբար Եվրոպայի խորհրդին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության զեկույցը Խարտիայի դրույթների կատարման մասին։ Ազգային զեկույցի ուսումնասիրության շրջանակում Փորձագիտական կոմիտեի պատվիրակությունն այցելում է Հայաստան՝ կառավարության ներկայացուցիչներից, ինչպես նաև հասարակական կազմակերպություններից և այլ անկախ աղբյուրներից Խարտիայի կատարման վերաբերյալ տեղեկություն ստանալու համար։

2007 թվականին Հայաստանի Հանրապետությունը «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի» կատարման վերաբերյալ Եվրոպայի խորհրդին է տրամադրել իր երկրորդ զեկույցը։ Իսկ 2009 թվականին ստացել է այդ զեկույցի կապակցությամբ Փորձագիտական կոմիտեի կարծիքը։

ՀՀ-ն ճանաչել է երկրում գործածվող փոքրամասնության 5 լեզուների հատուկ կարգավիճակը։ Դրանք են՝ ասորերենը, եզդիերենը, հունարենը, ռուսերենը, քրդերենը։

Իրականում պետք է փաստել, որ այսօր ոչ բոլոր էթնիկական խմբերն են իրենց միջավայրում գործածում իրենց լեզուն։ Բացի այդ որոշ էթնիկական խմբեր, մասնավորապես ուկրաինացիները, լեհերը, գերմանացիները, հրեաները, ասորիները մեծապես գործածում են ռուսերենը, այլ ոչ թե իրենց էթնիկական լե-

զուն: Միայն կոմպակտ ազգային փոքրամասնությունների տեղայնքներում են ազգային փոքրամասնությունները լայնորեն գործածում իրենց լեզուն՝ ասորական Դիմիտրով, Վերին Դվին գյուղերում, եզդի բնակչություն ունեցող Ամրե Թազա/Սաղունց, Ալագյազ, Դերեկ, Ջամշլու, Ավշեն, Երասխահուն, Զովունի և այլ գյուղերում:

Այսինքն, ՀՀ գործող օրենսդրությունը որևէ արգելք չի նախատեսում փոքրամասնությունների լեզուների գործածման ոլորտում, միևնույն ժամանակ սահմանում է ՀՀ պետական լեզվի գերակայությունը: Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում մշակված չափանիշների համաձայն՝ Հայաստանի յուրաքանչյուր ոչ հայազգի բնակիչ ազատորեն օգտվում է ազգային փոքրամասնություններին վերապահված բոլոր միջազգային և ներպետական իրավունքներից, սակայն պետական լրացուցիչ ֆինանսական աջակցություն ստանում են այն ազգային փոքրամասնությունները, որոնք բավարարում են որոշակի չափանիշներ: Այդ չափանիշներy Հայաստանում բավարարում են ռուսական, եզդիական, քրդական և ասորական էթնիկ համայնքները: Այսինքն ազգային (մայրենի) լեզվով ուսուցման բնագավառում պետական օժանդակություն ստանում են ռուսները, եզդիները, քրդերը, ասորիները, մշակութային մասով՝ այն կազմակերպությունները, որոնք, աշխատելով իրենց էթնիկ համայնքների կրթա-մշակութային զարգացման խնդիրների շուրջ, ստանում են նաև ֆինանսական և կազմակերպական օգնություն:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածը սահմանում է, որ քրեական դատավարության ընթացքում յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ ազգային փոքրամասնության ներկայացուցիչն իրավունք ունի հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է: Այդ կապակցությամբ և այդ ընթացքում քրեական դատավարության այն մասնակիցը, բացի վարույթ իրականացնող մարմնից, որը չի տիրապետում քրեական դատավարության լեզվին՝ հայերենին, կարող է հանդես գալ այն լեզվով, որին տիրապետում է և այդ ընթացքում նա ապահովվում է թարգմանչով, իսկ օրենքով նախատեսված

դեպքերում՝ այդ ծառայությունը տրամադրվում է անվճար։ Միաժամանակ, քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց օրենքով նախատեսված դեպքերում տրամադրվում է հանձնման ենթակա փաստաթղթերի վավերացված պատճեններն այն լեզվով, որին նրանք տիրապետում են։ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նշված պահանջը կիրառվում է քրեական դատավարության լեզվին չտիրապետող յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նկատմամբ։ Բացի այդ սահմանվում է, որ «Քրեական դատավարությունը տարվում է հայերեն։ Քրեական դատավարության ընթացքում յուրաքանչյուր ոք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունի հանդես գալ այն լեզվով, որին տիրապետում է»։

2007 թվականին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարվել է փոփոխություն, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունը տարվում է հայերեն։ Գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը (7-րդ հոդված)։

Եզդիների, ասորական, քրդական, ռուսական և վրացական համայնքներն ունեն ժամեր հանրային ռադիոյով, որտեղից հեռարձակվում են մայրենի լեզվով հաղորդումներ։ Նախկինում, հանրապետության «Արմենակոբ» մասնավոր հեռուստաընկերությունը շաբաթը մեկ անգամ ազգային փոքրամասնություններին ուղիղ եթերի հնարավորություն էր տրամադրում «Հայաստանի ազգային փոքրամասնությունները» հաղորդաշարի միջոցով՝ հայերենով։ Սակայն ընկերությունը փակվեց, և հետևաբար հաղորդաշարը նույնպես կասեցվեց։

Սույն թվականի դեկտեմբեր ամսին ՀՀ-ու բնակվող ազգային փոքրամասնությունների մասին հաղորդում էր նախապատրաստել նաև Հայաստանի Հանրային հեռուստատեսությունը։ Այն ազգային փոքրամասնությունների համայնքները, որոնք

չունեն հնարավորություն ստեղծելու հեռուստա եւ ռադիոծրագրեր, օգտվում են արբանյակային համակարգից, որը տրամադրվում է հունական, հրեական, լեհական, գերմանական, ուկրաինական դեսպանատների միջոցով:

Հանրային ռադիոընկերությամբ հեռարձակվում են 13 լեզուներով ամենօրյա հաղորդումներ (ռուսերեն 25ր., գերմաներեն 15ր., ասորերեն 15ր., քրդերեն 30ր., եզդիերեն 30ր. և այլն): Ազգային փոքրամասնությունների կազմակերպած միջոցառումները ներկայացվում են նաև ռուսերենով «Армения-наш общий дом» ամենշաբաթյա 30-րոպեանոց ռադիոհաղորդման ընթացքում, որը հեռարձակվում է Հանրային ռադիոընկերությամբ:

Համաձայն «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձակվող հեռուստառադիոհաղորդումների լեզուն հայերենն է՝ բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի, որոնց թվում են՝ ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռարձակվող հաղորդումները: Նշված օրենքի 28-րդ հոդվածով՝ Հանրային հեռուստառադիոընկերությունը պարտավոր է հեռուստառադիոլսարանին մատուցել այնպիսի հաղորդաշարեր եւ հաղորդումների տեսակներ, որոնցում հաշվի են առնվում Հայաստանի տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը:

Պետք է արձանագրել, որ 2008 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված «Հեռուստատեսության և ռադիոյի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հստակորեն ամրագրվում է, որ Հանրային հեռուստառադիոընկերությունը պարտավոր է Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար տրամադրել հեռուստատեսությամբ շաբաթական մինչև 2 ժամը, իսկ ռադիոյով՝ օրական մինչև 1 ժամը չգերազանցող եթերային ժամանակ:

Փոքրամասնությունների լեզուներով հեռարձակվող հաղորդումների պակասը բացատրվում է նաև «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքով Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից սահմանված հեռուստառադիոհաղորդումների պատրաստման որոշ տեխնիկական չափանիշների առկայությամբ, որոնք ոչ բոլոր դեպքերում է հնարավոր ապահովել՝ հաշվի առնելով ազգային փոքրամասնությունների կարողությունները, համապատասխան կադրերի բացակայությունը:

Ոլորտի ամենալուրջ հիմնախնդիրներից է հանդիսանում ուսուցիչների բացակայությունը: Այս հարցադրումը բարձրացվել է նաև վերջերս ԵԽ կողմից, Եվրախորհրդի նախարարների կոմիտեի հրապարակած «Հայաստանում փոքրամասնությունների լեզուների իրավիճակի մասին» երկրորդ զեկույցում Նախարարների կոմիտեն Հայաստանին կոչ է անում մշակելու համակարգված քաղաքականություն՝ ասորերենով, եզդիերենով և քրդերենով ուսուցիչների վերապատրաստումը և ժամանակակից ուսումնական անհրաժեշտ նյութերը կրթության բոլոր մակարդակներում մատչելի դարձնելու համար:

Իշխանության ներկայացուցիչները համաձայնում են, որ փոքրամասնությունների լեզվական որոշ խնդիրներ առկա են, դրա մեջ նաև փոքրամասնությունների մեղքն են տեսնում: Ըստ առկա տեղեկատվության՝ հանրապետության որոշ դպրոցներում դասավանդում են թե՛ ասորերեն, թե՛ եզդիերեն, չհաշված՝ ռուսերենը: Ինչպես տեղեկացնում են ՀՀ Գիտության և Կրթության նախարարությունից, հատուկ դասարաններ կարող են բացվել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների պահանջով այն դեպքում, եթե դասարանը կհամալրվի առնվազն 5-7 աշակերտով: Սակայն ոչ կոմպակտ բնակության վայրերում միշտ չէ հնարավոր ապահովել այդ թիվը: Նույն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները փաստում են այն հանգամանքը, որ իրենք իսկ՝ ազգային փոքրամասնությունները, քիչ են խոսում իրենց լեզուներով:

2. 4 Ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովումը կրթության ոլորտում

Հայաստանի Հանրապետության օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս փաստել այն հանգամանքը, որ ՀՀ ազգային փոքրամասնությունների կրթական իրավունքների իրականացման համար ստեղծված են լուրջ նախադրյալներ: ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք…պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք»: Համաձայն ՀՀ «Կրթության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ «ՀՀ-ն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրույթներից կամ այլ հանգամանքներից»: ՀՀ օրենսդրությունը թույլ է տալիս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին ստանալ կրթություն ինչպես իրենց ազգային փոքրամասնության լեզվով դասավանդվող դպրոցներում կամ դասարաններում, այնպես էլ հայերենով դասավանդում անցկացվող դասարաններում՝ իրենց ցանկությամբ:

Հայաստանի Հանրապետության «Հանրակրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հանրակրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ»: Փոքրամասնության լեզվի ուսուցումը բացարձակապես կարևոր է լեզվական իրավունքների պաշտպանության և լեզուների պահպանման համար: Այդ իսկ պատճառով սույն հարցադրումը գտնվում է ինչպես պետական կառույցների, այնպես էլ միջազգային կազմակերպությունների ուշադրության ներքո:

2007 թվականի դեկտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից ընդունված հրամանի հիման վրա՝ ազգային փոքրամասնությանը

պատկանող քաղաքացու երեխաների ընդունելությունը հանրակրթական դպրոց կատարվում է երեխայի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող դպրոցում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում՝ ուսուցման լեզվի ընտրությունը կատարում են երեխաների ծնողները (նրանց օրինական ներկայացուցիչները)[4]:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից յուրաքանչյուր տարի հաստատվում է ազգային փոքրամասնությունների հանրակրթական դպրոցի ուսումնական պլան, որտեղ ժամեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվի, գրականության, մշակույթի և պատմության ուսումնասիրման համար: ՀՀ կրթության և գիտության նախարարությունը մշակել է ազգային փոքրամասնությունների կրթության զարգացմանն ուղղված ծրագիր և ժամանակացույց, համաձայն որի՝ յուրաքանչյուր տարի դասագրքեր են տպագրվում ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզուն, գրականությունը և մշակույթն ուսումնասիրելու համար:

Կրթության նախարարությունը ձեռնամուխ է եղել իրականացնելու մի շարք ծրագրեր՝ ուղղված փոքրամասնությունների կրթության կազմակերպմանը: Այսպես, 2008 թվականից ներդրվել է «Ազգային փոքրամասնությունների հանրակրթական դպրոցի 9 (դասարանի) օրինակելի ուսումնական պլանը», ըստ որի՝ ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվի և գրականության ուսուցման համար 1-11-րդ դասարաններում հատկացված է շաբաթական 42 դասաժամ, անցկացվել են ազգությամբ եզդի ուսուցիչների 30-ժամյա վերապատրաստումներ 2008 թվականին, Կրթության ազգային ինստիտուտի մասնագետները նպաստել են 1-12-րդ դասարանների ասորերենի և գրականության չափորոշիչի և ծրագրի մշակման գործում, Կրթության ազգային ինստիտուտում գործում են ՀՀ ԿԳՆ «Իրանագիտություն» և «Սեմագիտություն» առարկայական հանձնաժողովները, որոնք իրա-

[4] Հայաստանի Հանրապետության 5-րդ և 6-րդ /համատեղ/ պարբերական ազգային զեկույցը Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի (21 դեկտեմբերի 1965թ.) իրականացման վերաբերյալ, 2007:

կանացնում են եզդիերենով ու ասորերենով ուսումնական ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների փորձաքննություն, 2009 թվականին իրականացվել են հետևալ միջոցառումները. փորձաքննություն է անցել և հաստատվել ասորերենի 1-12 դասարանների ծրագիրը, և հրատարակվել են «Խոսիր ասորերեն» 1-ին դասարանի դասագիրքը, «Գրիր և կարդա ասորերեն» 2-րդ դասարանի գիրք-տետրը; փորձաքննություն է անցել և հրատարակվել «Եզդիերենի 6» դասագիրքը, փորձաքննություն է անցել և ԿԳ նախարարի կողմից հաստատվել է քրդերենի 1-12 դասարանների ծրագիրը, վերապատրաստման դասընթացներ են կամզակերպվել (23.02.09-27.02.09) ազգությամբ եզդի 10 ուսուցիչների համար: Բացի դրանիցտրագրվել են քրդերեն նոր դասագրքեր:

2010 թվականի ընթացքում հրատարակվել են քրդերենի «Այբենարանը», վերահրատարակել «Եզդիերեն 1» և հրատարակել «Եզդիերեն 7» դասագրքերը, այդ նպատակով պետական բյուջեից հատկացվել են համապատասխան միջոցներ, ՀՀ ազգային փոքրամասնությունների խնդրանքով կազմակերպվել են հայոց լեզվի ուսուցման դասընթացներ ազգային փոքրամասնությունների 20 ներկայացուցիչների համար:

Հայաստանի հանրապետությունում եզդիերենի դասավանդմամբ հանրակրթական դպրոցներ կան Արագածոտնի մարզում, Արմավիրի մարզում, Արարատում, Կոտայքում և Երևանում: Կրթության կազմակերպման համար կարևոր հանգամանքներ՝ ուսուցիչների պատրաստումը և դասագրքերի տպագրումը:

Ասորերենով տարրական կրթությունը կատարվում է Ռուսաստանից և Իրանից ստացված ուսումնական նյութերի հիման վրա, որոնք հիմնականում արդեն հնացած դասագրքեր են: 2005 թվականին ասորերենով երկու դասագիրք է հրատարակվել՝ «Գրիր և խոսիր ասորերեն» և «Ասորերենի այբբենարան», որոնք վերահրատարակվել են 2009 թվականին, ինչպես նաև հայերեն-ռուսերեն-ասորերեն բառարան: Ասորերենի դասավանդմամբ դպրոցներն են՝ Երևանի թիվ 8 դպրոցը, Արարատի մարզի Վերին Դվին, Դիմիտրով գյուղերում գործող դրպոցները, Կոտայքի մարզի Արզնի գյուղի դպրոցը:

Ասորիների համար մայրենի լեզու է համարվում էթնիկ լեզուն, իսկ ասորիների միայն չնչին տոկոսն է տիրապետում գրավոր ասորերենին: Բնականաբար, նրանց համար ավելի հեշտ ու գերադասելի է կրթություն ստանալ ռուսերենով: Բայց ռուսերենով կրթություն ստանալու հարցում ասորիների համար որոշ խոչընդոտներ են առաջ գալիս: Ասորիների համար բարդություններ են առաջանում նաև ասորերենի մասնագետների պատրաստման հարցում: Այն ասորի երիտասարդները, ովքեր ցանկանում են ուսումնասիրել ասորերեն եւ հետագայում դասավանդել դպրոցներում, ընդունվում են ԵՊՀ-ի արևելագիտական ֆակուլտետ և հայերենի իմացության պակասի պատճառով՝ հիմնականում վճարովի բաժին: Սակայն բյուջեից ասորի համայնքին հատկացվող գումարը բավարար չէ նույնիսկ մեկ ուսանողի ուսման վարձը վճարելու համար:

Քրդերեն տարրական կրթությունը մատչելի է բոլոր քուրդ երեխաների համար, որոնց ծնողները ցանկություն են հայտնել այն տալու իրենց երեխաներին: Այն բոլոր բնակավայրերում, որտեղ երեխաների թիվը մեկ դասարանի համար բավարար է (ըստ Կրթության նախարարության՝ 5-7 աշակերտ), տարրական կրթությունը տրվում է քրդերեն:

Ինչ վերաբերում է հույներին, Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում է ազգությամբ հույն շուրջ 70 աշակերտ: Երևանի թիվ 12 միջնակարգ դպրոցում 1996 թվականից Հայաստանում Հունաստանի դեսպանատան աջակցությամբ և ֆինանսավորմամբ 2-9-րդ դասարանների սովորողներին կամավորության սկզբունքով ուսուցանվում է հունարերեն: Երևանի թիվ 74 միջնակարգ դպրոցում 1997 թվականից ՀՀԿԳ նախարարի հրամանով Հայաստանում Հունաստանի դեսպանատան աջակցությամբ ուսումնասիրվում է հունարեն ուսումնական պլանի «դպրոցական բաղադրիչի» հաշվին (2-8-րդ դասարաններում): Հունաստանի դեսպանության կողմից Երևանի թիվ 74 և թիվ 12 դպրոցներին տրամադրվում է մեթոդական և ուսումնական գրականություն:

Կարևոր է նաև մանկապարտեզների հարցադրումը: Մանկապարտեզներում են դրվում սերունդների դաստիարակման հիմքերը: Կրթության և գիտության նախարարության կողմից 2007 թվականի հունվարին տրված N29 Հրամանում, որտեղ հաստատված է օրինակելի հաստիքային ցուցակը, յուրաքանչյուր խմբում երեխաների թիվը և կիրառվող չափորոշիչները 2009թ. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26–ի հրամանի՝ երեխաների խմբերի խտության հավելվածում առանձին դրույթ է նվիրված ազգային փոքրամասնությունների երեխաներ պարունակող խմբերի գործարկման հնարավորությանը՝ թերհամալրված համակազմով, ինչը կխթանի այդ երեխաների ընդգրկումը նախադպրոցական կրթության ուսումնական հաստատություններում:

Այսպիսով, համաձայն այս հրամանի՝ հնարավոր է խումբ բացել անգամ այն դեպքում, երբ երեխաների թիվը բավարար չէ. եթե հաստատված չափորոշիչը յուրաքանչյուր խմբի համար Հայաստանի մանկապարտեզներում և այլ նախադպրոցական հաստատություններում 25-30 հոգի է, ապա ազգային փոքրամասնությունների երեխաների խմբերը կարող են գործել 8-10 մանուկների դեպքում:

Արարատի մարզի ասորաբնակ Դիմիտրով գյուղում գործում է մի մանկապարտեզ՝ 25 երեխայով և 3 դաստիարակով: Ուսուցումն առժամանակ կատարվում է հայերենով, բայց ջանքեր են գործադրվում կազմել ևս մի խումբ, որտեղ ուսուցումը կլինի ասորերենով: Երևանի N52 մանկապարտեզում կա հունարենով ուսուցվող մի խումբ:

Հայաստանի Հանրապետությունում կա նաև Ռուսաստանի Դաշնության բանակի կայազորի 6 դպրոց, որից երկուսը՝ Երևանում, մնացածը՝ Արտաշատում, Մեղրիում, Արմավիրում, Գյումրիում: Այսպիսով, Հանրապետության 1410 միջնակարգ դպրոցներից մեկը ռուսերենով ուսուցմամբ է, իսկ 39-ում, որից 2-ը մասնավոր են, գործում են ռուսերենով ուսուցմամբ 1-11-րդ դասարաններ (առանձին դպրոցներում բացակայում են որոշ դասա-

բաններ)։ 37 դպրոցից 16-ը Երևանում են, իսկ մնացածը՝ մարզերում։ Ներկայումս Երևանում գործում է երկու մասնավոր դպրոց՝ «Սլավյանսկայա» (դպրոցը ռուսերենով ուսուցմամբ է), «Մաշտոց» (ունի ռուսերենով ուսուցմամբ դասարաններ)։

Ինչ վերաբերում է ռուսերենի ուսուցմամբ դպրոցներին, ապա պետք է մասնավորապես հիշատակել Լոռու մարզի միակ ռուսական՝ Ֆիոլետովո գյուղի միջնակարգ դպրոցը, որն ունի 109 տարվա պատմություն։ 197 աշակերտները սովորում են ռուսական դեսպանատան կողմից տրամադրվող ռուսական գրքերով ու ծրագրերով։ Ֆիոլետովոյում հիմնական դպրոցի շենք կառուցվել է 2 անգամ, երկրաշարժից հետո ռուսական Վոլգոգրադ քաղաքի շինարարների կառուցած դպրոցը երբևէ չէր հիմնանորոգվել, և խարխլված տանիքի պատճառով կրթօջախն այլևս չէր կարող նպատակին ծառայել։ Հայաստանում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Վյաչեսլավ Կովալենկոն և «Հարավկովկասյան երկաթուղիների» տնօրինության համատեղ նախաձեռնությամբ որոշվեց վերանորոգել դպրոցը։ Նախաձեռնությանն աջակցեցին «Բիլայն» ընկերությունը, Էներգետիկայի միջազգային կորպորացիան, ՎՏԲ և «Անելիք» բանկերը։ Միևնույն ժամանակ Տավուշի մարզի Դիլիջանի թիվ 2 նախկին ռուսական, այժմ հիմնական դպրոցի (դպրոցում ռուսական դասարաններ կան) ռուսերենի ուսուցումը վտանգված էր, քանի որ ավագ դպրոց համակարգի ներմուծումից հետո, ըստ օրենքի, աշակերտներից ոմանք պետք է տեղափոխվեն Դիլիջանի թիվ 1 դպրոց, որը հայալեզու է։

Պետք է փաստել, որ կադրերի պակասի պատճառով ուսուցիչների զգալի մասը գալիս է շրջակա գյուղերից, երբեմն՝ տասնյակ կիլոմետր հեռավորությունից, ինչը լրացուցիչ ծախս է վերջիններիս համար։ Իսկ ուսուցչի աշխատավարձը կապված է դասավանդվող առարկայի ժամաքանակի հետ (նկատենք, որ գյուղերում կան երկկոմպլեկտ և անգամ եռակոմպլեկտ դասարաններ)։ Այդ պատճառով խիստ ցածր է նրանց աշխատավարձը, ինչը գործող ուսուցիչների համար պատճառ է դառնում, որ խուսափեն այդ աշխատանքից, իսկ ուսանողների համար՝ որ խու-

սափեն այդ մասնագիտությունից (այս դեպքում ոչ հեռավոր ապագայում ընդհանրապես չենք ունենա այդ լեզվի ուսուցիչներ):

Այսինքն, կադրերի հարցը մնում է բաց, քանի որ դեռևս չկան նոր մասնագետներ ներգրավելու շարժառիթներ և խրախուսիչ հանգամանքներ:

2011 թվականի հունվարի 19-ին ՀՀ Նախագահը ստորագրել է Ազգային ժողովի ընդունած «Լեզվի մասին», «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքներում լրացում և փոփոխություններ կատարելու մասին օրենքները: «Հանրակրթության մասին» օրենքում սահմանվել են «այլընտրանքային կրթական ծրագիր», «հեղինակային կրթական ծրագիր», «փորձարարական կրթական ծրագիր», «միջազգային կրթական ծրագիր» հասկացությունները: Ըստ օրենքի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օտար լեզուների խորացված կամ այլ առարկաների օտար լեզուներով հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն կարող է հիմնվել միայն ՀՀ կառավարության համաձայնությամբ կամ մասնակցությամբ:

Միևնույն ժամանակ օտար լեզվով կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար հայոց լեզվի և հայագիտական առարկաների հայերենով ուսուցումը պարտադիր է՝ հանրակրթության պետական չափորոշիչին համապատասխան: Ընդունված օրենքի համաձայն՝ նախատեսվում է բացել տասնմեկ այլընտրանքային դպրոց, որոնցից երկուսը ստեղծվելու են որպես ոչ պետական ուսումնական հաստատություններ և գործելու են Դիլիջանում և Ջերմուկում՝ յոթերորդ դասարանից, մնացած ինը ստեղծվելու են միջպետական և միջկառավարական համաձայնագրերի հիման վրա ու իրականացնելու են միջնակարգ կրթության երրորդ աստիճանի հանրակրթական ծրագրեր: Նախատեսվում է, որ նշված այլընտրանքային դպրոցներում ուսուցումը բացի հայագիտական առարկաներից, իրականացվելու է օտար լեզուներով: Առաջին դպրոցի բացումը, ըստ նախարարի, հավանաբար կկատարվի 2012-13 թվականներին:

Ինչ վերաբերում է բարձրագույն կրթական հաստատություններում ուսման հնարավորությանը, ապա պետք է փաստել, որ ներկայումս Կրթության նախարարությունը բավական աջակցություն է ցուցաբերում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին բարձրագույն կրթական հաստատություններում կրթություն ստանալու ուղղությամբ, մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է ԲՈՒՀ-երի օտար լեզուների և մշակութային բնագավառի կրթական ծրագրերին: Ընդունելության ընթացակարգը սահմանված է կրթության նախարարի հրամանագրով:

2.5 Ազգային փոքրամասնությունների սոցիալ- տնտեսական իրավունքները

Ազգային փոքրամասնությունների առկա հիմնախնդիրների շարքում ուրույն զանգվածը կազմում են սոցիալ-տնտեսական խնդիրները և հիմնահարցերը: Կատարված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հիմնականում բախվում են այնպիսի խնդիրների, որոնց բախվում է յուրաքանչյուր ՀՀ քաղաքացի, մասնավորապես աշխատանքի, սոցիալական ապահովության բնագավառներում և այլն: Առկա սոցիալ-տնտեսական խնդիրները կրում են ընդհանուր բնույթ և չեն վերաբերում բացառապես ազգային փոքրամասնությունների իրավունքներին, այդ իսկ պատճառով պահանջում են ընդհանրական, համակարգված լուծում: ՀՀ աշխատանքային օրենսդրությունն ապահովում է աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, քաղաքացիությունից, սոցիալական դրությունից, դավանանքից, ամուսնական վիճակից և ընտանեկան դրությունից, տարիքից, համոզմունքներից կամ տեսակետներից, կուսակցություններին, արհեստակցական միություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելուց, աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից: Այս դրույթը սահմանված է աշխատանքային օ-

րենսգրքի 3-րդ հոդվածում: 15-րդ հոդվածի համաձայն՝ «Աշխատանքային իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը (աշխատանքային իրավունակություն) հավասարապես ճանաչվում է Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիների համար: Օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք Հայաստանի Հանրապետությունում ունեն այնպիսի աշխատանքային իրավունակություն, ինչպիսին Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ»: Որպես երաշխիք՝ Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելք հանդիսանում է 114-րդ հոդվածում սահմանված դրույթը, որի համաձայն՝ սեռը, ռասան, ազգությունը, լեզուն, ծագումը, քաղաքացիությունը, սոցիալական դրությունը, դավանանքը, ամուսնական վիճակը և ընտանեկան դրությունը, համոզմունքները կամ տեսակետները, կուսակցություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելը չի կարող հանդիսանալ պատճառ պայմանագիրը լուծելու համար:

Պետք է փաստել, որ Շրջանակային կոնվենցիան չի նախատեսում սոցիալ- տնտեսական իրավունքների ապահովման երաշխիքներ: Դա մեծապես պայմանավորված է այն կանխավարկածով, որ համաձայն խտրականության բացառման սկզբունքի, որը սահմանված է աշխատանքային օրենսդրությամբ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն օգտվում են նույն իրավունքներից՝ ինչ այլ քաղաքացիները:

Այս պարագայում բավական դժվար է պատկերացում կազմել ազգային փոքրամասնությունների նկատմամբ խտրական վերաբերմունքի առկայության մասին, քանի որ, ըստ էության, կոնվենցիայում համապատասխան դրույթի բացակայությունը չի ենթադրում նաև այս բնագավառում վերահսկողության մեխանիզմի առկայություն: Այսինքն, ներկա դրությամբ չկան տվյալներ ազգային փոքրամասնությունների գործազրկության, ինչպես նաև խտրական վերաբերմունքի դեպքերի արձանագրման մասին: Մոնիտորինգի համակարգի բացակայությունը, բնականաբար, անիրատեսական է դարձնում ամբողջական պատկե-

բացում կազմելու հնարավորությունը: Հարց է առաջանում, թե ում կարող է դիմել ազգային փոքրամասնության ներկայացուցիչը, եթե բախվում է իր իրավունքների ոտնահարմանը: Որոշ դեպքերում նրանք դիմում են Կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների հարցերի և կրոնի վարչություն, որոշ դեպքերում՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ կամ այլ գերատեսչություններ, սակայն կոնկրետ հասցեատիրոջ բացակայությունը չի երաշխավորում գործի համակարգված ուսումնասիրումը:

Այդ ամենը ևս մեկ անգամ ընդգծում է միասնական օրենսդրության մշակման անհրաժեշտությունը: Եվ պատահական չէ, որ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովն իր զեկույցներում բազմիցս հորդորել է ընդունել միասնական, ամբողջական օրենսդրություն, որը կսահմանի համակարգված, կուռ ընդհանրական քաղաքականություն ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովման հարցում: Օրինագիծը, մեր համոզմամբ, պետք է նախատեսի դատական պաշտպանության հնարավորություն՝ խտրականության դրևորման դեպքում ազգային փոքրամասնության ներկայացուցչի նկատմամբ: Այս դեպքում նպատակահարմար կլինի սահմանել «ապացուցողական կարգավիճակի» սկզբունքը, որի համաձայն՝ խտրականության առկայության փաստը կդրվի պատասխանատու ապացուցողի վրա:

2. 6 Ազգային փոքրամասնությունների քաղաքական իրավունքները

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 3-րդ հոդվածը սահմանում է. «Ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն: Այդ հիմքերով ընտրական իրավունքի ցանկացած սահմանափակում հետապնդվում է օրենքով»: 4-րդ հոդվա-

ծով ապահովվում է քաղաքացիների՝ ընտրություններին մասնակցելու հավասար հիմունքներ և հավասար պայմաններ իրենց ընտրական իրավունքի իրականացման համար:

Հայտնի է, որ չնայած Հայաստանում ազգային փոքրամասնությունների համայնքների համեմատաբար մեծ թվին, դրանց պատկանող անձանց թիվը բավական փոքր է, որը հնարավորություն չի տալիս նրանց անգամ կոմպակտ բնակության վայրերից սեփական պատգամավոր ունենալու:

Սրանով է պայմանավորված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում նրանց ներկայացուցչի բացակայությունը: Եվ չնայած այն հանգամանքին, որ Ազգային ժողովում ազգային փոքրամասնության ներկայացուցիչ ներկայացված չէ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված է դրույթ, որի համաձայն՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին ցանկացած համայնքում մեծամասնություն ունենալու դեպքում հնարավորություն է ընձեռվում ընտրվելու համայնքի ներկայացուցչական մարմնի ավագանու կազմում, իսկ որակյալ մեծամասնություն ունենալու դեպքում՝ ընտրվելու որպես համայնքի ղեկավար: Նույն կերպ, մեծամասնական ընտրահամակարգով ազգային փոքրամասնության ցանկացած ներակայացուցիչ կարող է ընտրվել և՛ տեղական ինքնակառավարման, և՛ օրենսդիր մարմիններում: Իդեպ, Ազգային Ժողովում կա ազգային փոքրամասնությունների մեկ ներկայացուցիչ, որն ազգությամբ հույն է, սակայն նա ներկայացված է ոչ թե ազգային փոքրամասնությունների կազմից, այլ ԱԺ կազմում ընդգրկված կուսակցության անդամ է:

2.7 Պատասխանատվությունը ռասայական խտրականության դրսևորման համար

Ինչ վերաբերում է պատասխանատվությանը ռասայական խտրականության դրևսևորման և ազգային փոքրամասնությունների իրավունքների ոտնահարման համար, ապա պետք է նշենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարած անձինք հավասար են օրենքի առջև և են-

թակա են քրեական պատասխանատվության՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, ծննդից, գույքային կամ այլ դրությունից: 143-րդ հոդվածն էլ սահմանում է, որ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված անձի ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, որը վնաս է պատճառել անձի օրինական շահերին, պատժվում է տուգանքով կամ ազատազրկմամբ: 226-րդ հոդվածի համաձայն՝ ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները պատժվում են տուգանքով կամ ուղղիչ աշխատանքներով կամ ազատազրկմամբ: Բացի այդ, կարևոր հանգամանք է հանդիսանում նաև այն փաստը, որ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի համաձայն՝ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներից է հանդիսանում հանցանքն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության, այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժառիթներով կատարելը:

2007 թվականին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընդունած «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման արդյունքում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածը սահմանում է, որ իրավունքների, ազատությունների և պարտականությունների խտրականությունը՝ կախված ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, ազգային փոքրամասնությանը պատկանելիությունից, ծնունդից արգելվում է»: «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օ-

րենքի 8-րդ հոդվածով ևս ամրագրվում է, որ բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով:

Պետք է փաստել, որ ըստ առկա տեղեկատվության, որը տրամադրվել է Ոստիկանության և Դատախազության հատուկ ստորաբաժանումների կողմից, Հայաստանի Հանրապետությունում ազգային խտրականության հողի վրա կատարված հանցագործություններ չեն գրանցվել: Այդ մասին են փաստում նաև ԵԱՀԿ-ի ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից կազմված՝ ատելության հիմքի վրա կատարված հանցագործությունների մասին զեկույցները, որտեղ արձանագրվել են, որ ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների նկատմամբ խտրականության լուրջ դրսևորումներ չեն եղել: Հայաստանի Հանրապետությունում բնակվող 11 ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից 2004-2009թ.թ.-ին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել է 24 դիմում-բողոք:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների խախտման վերաբերյալ ստացված փոքրաթիվ դիմումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց իրավունքների խախտումներն առավելապես կրել են ընդհանուր բնույթ և կապված չեն եղել նրանց՝ ազգային փոքրամասնության ներկայացուցիչ լինելու հանգամանքի հետ, նրանց բողոքներում ներկայացվել են նույնպիսի հարցեր (բնակարանային խնդիրների, սոցիալական ծառայությունների ոլորտում հանդիպող դժվարությունների, ՀՀ դատական մարմինների կողմից կայացված դատական ակտերից դժգոհությունների վերաբերյալ), ինչպիսիք բարձրացվում են մեր ազգաբնակչության դիմում-բողոքներում: Այսինքն, բուն ազգային խտրականության դրսևորման հետ կապված դիմումներ չեն արձանագրվել:

3. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազգային փոքրամասնությունների իրավական դրության և փաստացի վիճակի վերլուծությունը, ինչպես նաև միջազգային վերահսկողական մեխանիզմների եզրահանգումները թույլ են տալիս եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների համար ստեղծված է հանդուրժողական մթնոլորտ, և խտրականության դրսևորման լուրջ օրինակներ չեն արձանագրվել: Միևնույն ժամանակ, դա ամենևին չի նշանակում, որ ոլորտում խնդիրներ չկան: Պետք է փաստել, որ ազգային փոքրամասնությունների խնդիրները մեծապես արդյունք են ոչ թե օրենսդրական բացթողումների կամ դրանց բացակայության, այլ պատշաճ իմպլիմենտացիոն մեխանիզմների և միջոցների բացակայության:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է մի շարք միջազգային պայմանագրեր, որոնք ուղղակիորեն ուղղված են ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովմանը: Այդ միջազգային պարտավորությունների պատշաճ ապահովումը երաշխավորելու համար պետությունը պարտավոր է ներկայացնել տարեկան հաշվետվություն՝ կատարված միջոցառումների մասին: Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ ստանձնված պարտավորությունները կատարվում են բավարար մակարդակով: Իհարկե պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ազգային փոքրամասնությունները ՀՀ-ում մեծ զանգված չեն կազմում, որը մի կողմից կարծես թե նպաստում է պետության կողմից իր գործառույթների պատշաճ իրականացմանը, սակայն մյուս կողմից ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների սակավությունը որոշ դեպքերում խոչընդոտում է որոշ իրավունքների իրականացմանն ուղղված համապատասխան դաշտի ձևավորումը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է կրթական, մշակութային իրավունքներին, որոնց ապահովման համար պետք է ազգային փոքրամասնությունների գործուն ներգրավվա-

ծություն. օրինակ՝ դպրոցները չեն համալրվում երեխաներով, մշակութային միջոցառումներ իրականացնելիս չկան բավարար մարդիկ, որոնք կտիրապետեն լեզվին և այլն:

Այսպիսով, ազգային փոքրամասնության ներկայացուցիչների սակավությունն օբեկտիվորեն որոշ դեպքերում խոչընդոտում է նրանց ազգային ինքնության պահպանումը և զարգացումը, և հաճախ այդ փոքրաթիվ ներկայացուցիչները նախընտրում են ձեռնպահ մնալ ազգային ինքնության պահպանմանն ուղղված գործոնները առաջ քաշելուց:

Ազգային փոքրամասնությունների խնդիրների մեծամասնությունը պայմանավորված է երկրում առկա սոցիալ-տնտեսական պայմաններով, և այն խնդիրները, որոնք հիշատակվում էին շատ հաճախ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից, պահանջնում էին ընդհանրական լուծում: Բացի դրանից, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները պատշաճ կերպով իրազեկված չեն իրենց իրավունքների և արտոնությունների մասին և չեն օգտվում իրենց ընձեռած հնարավորություններից:

Հարկ է նշել, որ ԵԽ Նախարարների կոմիտեն դեռևս 2007 թվականի փետրվարին Հայաստանի կողմից Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ընդունված բանաձևում Հայաստանի իշխանություններին կոչ է արել քայլեր ձեռնարկել բարձրացնելու իրազեկվածությունն ազգային փոքրամասնությունների վերաբերյալ հանրության, քաղաքական գործիչների և լրատվամիջոցների շրջանակում: Իդեպ, պատշաճ գիտելիքների և հմտությունների սակավությունը նաև նկատվում է պետական որոշ մարմինների աշխատակիցների մոտ:

Ազգային փոքրամասնություններն իրենց մայրենի լեզվի ուսուցման իրավունքը գործադրելիս չեն հանդիպում ակնհայտ խոչընդոտների: Սակայն ազգային բոլոր փոքրամասնությունների համար առկա են և՛ մասնագետների, և՛ կրթական ծրագրերի պատրաստման խնդիրներ: Բացառություն է կազմում ռուսական համայնքը, քանի որ ուսումնական նյութերը ստացվում են Ռու-

սաստանից, որտեղ պատրաստվում են նաև անհրաժեշտ մասնագետներ: Որոշ օգնություն ստանում են նաև այլ փոքրամասնությունները, որոնք ունեն պետականություն և ստանում են աջակցություն իրենց էթնիկական պատկանելիության պետությունից, օրինակ՝ հույները, լեհերը, վրացիները: Իսկ այն համայքները, որոնք չունեն պետականություն, հիմնականում աջակցությունը ստանում ՀՀ իշխանությունների կողմից, կամ որոշ դեպքերում՝ արտասահմանում գտնվող հասարակական կազմակերպություններից:

Կրթական իրավունքների իրականացման համար կարևոր գործոն են հանդիսանում ազգային փոքրամասնությունների ավանդույթները և սովորույթները: Այսպես, ազգային ավելի «պահպանողական» փոքրամասնությունների դեպքում, ինչպիսիք են, օրինակ՝ քրդերը և եզդիները, կրթությանն ավելի քիչ տեղ է հատկացվում: Այս մասին վիճակագրությունն է վկայում: Այսպես, ըստ եզդիական համայնքի ներկայացուցչի, շատ դժվար է ներգրավել եզդի երիտասարդներին համայնքի գործունեությանը, քիչ են նաև ուսումնական հաստատություններ ընդունվելու համար պատշաճ գիտելիք ունեցող հավակնորդները համայնքում: Չնայած, ըստ առկա տեղեկատվության, այն սակավաթիվ դիմումները, որոնք ուղղված են եղել համայնքի կողմից Կրթության նախարարությանը, ստացել են համապատասխան ընթացք:

ԲՈՒՀ-եր ընդունված ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները լրացուցիչ արտոնություններից չեն օգտվում, սակայն, ինչպես նշում է Երևանի Պետական Համալսարանի ուսումնամեթոդական վարչությունում, ուսումնառության ընթացքում նրանց բավականին ընդառաջում են, զեղչվում են ուսման վարձավճարները: Ի դեպ, նրանց թիվը ԵՊՀ-ում չի գերազանցում 2 տասնյակը:

Ինչ վերաբերում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդունելությանը, ապա ըստ Կրթության և գիտության նախարարության տրամադրված տեղեկատվության՝ նրանք ստացել են առանձին դիմումներ որոշ համայնքներից, և գրեթե բոլորը բավարարվել են: Այսինքն, ներքին կարգով, անհրա-

ժեշտության դեպքում համայնքի ղեկավարի դիմումի հիման վրա կրթության նախարարությունը կարող է աջակցել ազգային փոքրամասնության ներկայացուցչին ընդունվելու ԲՈՒՀ՝ նրա կողմից նվազագույն ութ բալ հավաքելու դեպքում: Այդ իսկ պատճառով, ցանկալի կլինի օրենսդրական ամրագրում տալ այս հարցին և պետպատվերի շրջանակում ընդունելություն սահմանել ազգային փոքրամասնության ներկայացուցիչների համար: Խոսքը մասնավորապես վերաբերում է մանկավարժական համալսարանին, որի շրջանակներում պատրաստված մասնագետների պահանջարկ ունեն գրեթե բոլոր համայնքները, կամ էլ այն մասնագիտացմամբ, որն անհրաժեշտ է որևէ կոնկրետ համայնքի:

Միաժամանակ, Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնություններն Ազգային ժողովում ներկայացված չեն: Սակայն ազգային փոքրամասնությունները ներկայացված են տեղական ինքնակառավարման մարմիններում՝ գյուղապետերի և ավագանու մակարդակի:

Կատարված հետազոտության արդյունքները փաստում են, որ ազգային փոքրամասնության ներկայացուցիչները գործադիր կամ օրենսդիր մարմիններում դեռ ներկայացված չեն: Իհարկե դա չի կարելի դիտարկել որպես խտրականության արդյունք, սակայն, միևնույն ժամանակ, մեր կարծիքով, նրանց առավել ակտիվ ներգրավվումը պետական ծառայությանը կարող է լրացուցիչ երաշխիք հանդիսանալ նրանց իրավունքների իրականացման համար:

Այսպիսով, պետք է փաստել, որ խնդիրներն առկա են, սակայն դրանք պայմանավորված չեն ազգային պատկանելիությամբ և հիմնականում սոցիալ-տնտեսական բնույթի են, որոնց բախվում են նաև հայերը, և դրանց լուծումը կապված է Հայաստանի տնտեսական իրավիճակի բարելավման հետ:

Լուրջ խնդիրների շարքում պետք է նշել կադրերի վերապատրաստման խնդիրը, քանի որ ներկայումս գրեթե բոլոր համայնքներում նկատվում է կադրերի լուրջ պակաս: Այսպես, ինչպես փաստում են մեր հետազոտության արդյունքները, որոշ դպրոցներ չունեն բավականաչափ մանկավարժներ, ոմանք էլ

գալիս են հարևան գյուղերից, որը լրացուցիչ ծախսերի հետ է կապված: Նման վիճակի առկայությունը տրամաբանորեն ազդում է նաև մասնագետների որակի վրա՝ մրցակցության բացակայության պայմաններում:

Կարևոր հիմնահարցերից է հանդիսանում նաև նախակրթարանների առկայությունը: Հայերենի ուսուցումը կարևորվում է մասնավորապես կոմպակտ բնակության վայրերում, քանի որ ազգային փոքրամասնության ներկայացուցիչները, որոնք բնակվում են գյուղական վայրերում, շատ հաճախ պատշաճ մակարդակով չեն տիրապետում հայերենին, որը հետագայում խոչընդոտում է նրանց կրթական և այլ իրավունքների իրացմանը:

Այսօր Հայաստանի ազգային փոքրամասնություններն ունեն խնդիրներ, որոնք պայմանավորված չեն նրանց նկատմամբ - Հայաստանի Հանրապետության իշխանությունների վարած խտրական քաղաքականությամբ կամ բնիկ բնակչության անբարյացակամ վերաբերմունքով, այլ հետևանք են հանրապետության սոցիալ-տնտեսական ընդհանուր ծանր վիճակի: Սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակով պայմանավորված՝ այսօր դժվարացել է հանրապետության ողջ բնակչության մի շարք առանցքային իրավունքների իրացման խնդիրը: Եթե այսօր Հայաստանի ազգային փոքրամասնությունների մի մասը չունի իրենց համայնքներում մայրենի լեզվով դպրոցներ բացելու կամ մշակութային միջոցառումներ իրականացնելու հնարավորություն, ապա դա ոչ թե պետության կողմից կիրառվող խտրականության ու ստեղծված խոչընդոտների արդյունք է, այլ պետության հնարավորությունների կրճատման և հասարակության մեծ մասի սոցիալ-տնտեսական անբարենպաստ վիճակի հետևանք:

Այնուհանդերձ, ազգային փոքրամասնությունների համայքների հետ հանդիպումների ընթացքում հնարավոր եղավ վեր հանել նրանց հուզող հետևյալ հիմնախնդիրները՝

- պետական բյուջեից ոչ բավարար ֆինանսավորումը,
- պետական միջոցների ոչ համաչափ բաշխումը,
- ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվով դասագրքերի ստեղծման ու տպագրության գործում պետա-

կան աջակցության տրամադրման հետ կապված խնդիրներ,

- ազգային լեզվով դասագրքերի մատչելիության հարցը,
- ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվով հեռուստատեսային և ռադիոհաղորդումների ու դրանց եթերաժամի ապահովումը,
- տարբեր ոլորտներում մասնագետների սակավությունը,
- կոորդինացիոն մարմնի գործնեության արդյունավետության բարձրացումը,
- ազգային փոքրամասնությունների էլեկտրոնային և տպագիր ԶԼՄ-ների մատչելիության ապահովումը,
- ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվով նախակրթարանների (մանկապարտեզների) բացակայությունը,
- ընտրովի մարմիններում ազգային փոքրամասնության ներկայացուցչի բացակայությունը,
- հայոց լեզվի ուսուցման դասընթացների կազմակերպման խնդիրները և այլն:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին հուզող խնդիրները, մեր Հանրապետությունում անհրաժեշտ է մշակել լրացուցիչ մեխանիզմներ ազգային փոքրամասնության ազգային ինքնության պահպանության և խթանման համար:

- *Մշակել միասնական ռազմավարություն կրթության բնագավառում՝ ուղղված ազգային փոքրամասնությունների կրթական իրավունքների ապահովմանը:* Այդ ռազմավարությունը պետք է ընդգրկի ինչպես հանրակրթական, բուհական, այնպես էլ՝ մասնագիտական վերապատրաստման ուղղությունները:

  Ինչ վերաբերում է հանրակրթական դպրոցներում կադրերի հիմնահարցին, ապա պետք է փաստել, որ սա առավել խոցելի հարցադրումն է, որի լուծման ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցա-

ռումներ: Կադրերի պակասը լուծելու համար նպատակահարմար կլինի յուրաքանչյուր տարի համայքներին առաջարկել պետպատվերի ուսուցման չափաբաժիններ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր համայքի պահանջարկը: Ինչպես փաստեցին որոշ համայնքների ներկայացուցիչներ, նրանք հաճախ ներգրավում են դասավանդման գործընթացում ուսանողներին՝ կադրերի պակասի պատճառով: Ցանկալի կլիներ տալ այդ երևույթին իրավական ամրագրում, դեռ ավելին, հետագայում նրանց ոլորտում պահելու համար ստեղծել բարենպաստ պայմաններ:

Որպեսզի երաշխավորվի բարձրագույն ուսումնական հաստատություններում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ուսումը, պետք է տալ օրենսդրական ամրագրում ներկայումս կիրառվող պրակտիկային, որի համաձայն՝ համայնքի կողմից գրավոր դիմումի դեպքում՝ ուղղված Կրթության և գիտության նախարարին, դիմումին տրվում է դրական ընթացք, և դիմորդն ընդունվում է ԲՈՒՀ նվազագույն (ութ) բալ հավաքելու դեպքում:

Միջոցներ ձեռնարկել նախադպրոցական կրթության ապահովման ուղղությամբ, հատկապես այն վայրերում, որտեղ զգալի թվով ազգային փոքրամասնություններ են բնակվում: Պարտադիր գործոն պետք է լինի նրանց հայերենի ուսուցումը, որպեսզի հետագայում նրանք կարողանան հաճախել դպրոց:

- *Բարձրացնել հասարակության իրազեկվածությունը, մասնավորապես իրավակիրառողների շրջանում:* Ներկայումս Կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերով վարչությունը քաղաքացիական ծառայության խորհուրդի հետ տանում է աշխատանքներ քաղծառայողների վերապատրաստման ծրագրում ազգային փոքրամասնություններին վերաբերող հատուկ դասընթացի ներկայացման համար: Ըստ ստացված տեղեկատվության՝ դասընթացն ընդգրկ-

վելու է ընդհանուր ծրագրի մեջ և կազմելու է երկու ժամ: Մեր կարծիքով, նպատակահարմար է համապատասխան վերապատրաստում անցկացնել նաև ոստիկանության, դատախազության, դատական ծառայության ներկայացուցիչների համար ևս:

- *Կազմակերպել դասընթացներ* ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող քաղաքացիական ծառայողներին և մարզպետարանների աշխատակիցներին:
- *Մշակել օրենք «Ազգային փոքրամասնությունների մասին»:* Նման օրենքի ընդունման անհրաժեշտությունը թելադրված է ոչ միայն հանրապետությունում ապրող ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ, այլ նաև սկզբունքային բնույթի հետևյալ նկատառումներով.

  – հանրապետությունում փոխադարձ համաձայնության, վստահության, բարյացակամության մթնոլորտի պահպանման, ազգային հիմքով հնարավոր հակասությունների բացառման,

  – ազգային փոքրամասնությունների վերաբերյալ ՀՀ ընդունած միջազգային փաստաթղթերից բխող պարտավորությունների կատարման,

  – որպես ժողովրդավարության ուղին բռնած պետություն՝ ազգային փոքրամասնությունների նկատմամբ պետական քաղաքականության սկզբունքների հռչակման և դրանց իրականացումն ապահովող իրավական հիմքի ձևավորման անհրաժեշտությամբ:
- *Ազգային փոքրամասնության ներկայացուցիչներին գործադիր և օրենսդիր մարմիններում առավել ակտիվ ընդգրկել:* Չնայած այն հանգամանքին, որ ազգային փոքրամասնությունները մեծ զանգված չեն կազմում, այնուհանդերձ, նրանք պետք է ունենան որոշակի ներկայացուցչություն: Այս հարցադրումը և դրա համապատասխան լուծումները ևս կարող են գտնել իրենց ամրագրումն

օրինագծում: Օրինագիծը մեկ անգամ ևս կամրագրի նաև տեղական ինքնակառավարման մարմիններում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների առաջադրվելու և ընտրվելու ՀՀ օրենսդրությամբ ՀՀ քաղաքացիների համար սահմանված իրավունքը: Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիները, անկախ ազգային պատկանելիությունից, հավասար իրավունք ունեն մասնակցելու պետական իշխանության բոլոր մակարդակների ընտրություններին համընդհանուր ուղղակի ընտրությունների միջոցով: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք Հայաստանի բնիկ բնակչության հետ հավասար իրավունք ունեն առաջադրելու իրենց թեկնածությունն իշխանության բոլոր մակարդակների ընտրովի մարմիններում, ինչպես նաև ունեն պետական կառավարման ցանկացած մարմնում ցանկացած մակարդակի պաշտոն զբաղեցնելու իրավունք:

- *Խթանել հարաբերակցությունը տարբեր համայնքների միջև:* Մեր համոզմամբ ազգային փոքրամասնությունների տարբեր համայնքների շփումները, համատեղ ծրագրերը, կրթա-մշակութային միջոցառումները կնպաստեն ազգապահպանման գործընթացին, հնարավորություն կընձեռեն ծանոթացնելու միմյանց մշակույթին ու ավանդույթներին և այլն: Դա կարելի է մասնավորապես իրականացնել երիտասարդության շրջանակներում ամառային ճամբարների տեսքով, ուր կընդգրկվեն ազգային փոքրամասնության պատկանող դպրոցականներ:
- *Մշակութային կենտրոնների ստեղծում.* մշակութային կյանքն աշխուժացնելու համար կարևոր միջոց կարող է հանդիսանալ մշակութային կենտրոնների ստեղծումը, մասնավորապես գյուղերում, կոմպակտ բնակության վայրերում: Մայրաքաղաքում սույն հիմնահարցը քիչ թե շատ կարգավորված է, սակայն այն բաց է մարզերում:
- *Ազգային փոքրամասնությունների միջհամայնքային համագործակցությունը խթանելու համար կոորդինացիոն*

մարմնի ձևավորում. համատեղ ծրագրեր իրականացնելու, նրանց կյանքի կոչելու, ազգային փոքրամասնությունների ոլորտում հետագա ռազմավարություն մշակելու համար խրախուսելի կլինի կոորդինացիոն ենթախումբի առկայությունը, որի կազմի մեջ կընդգրկվեն նաև ազգային փոքրամասնությունների ակտիվ ներկայացուցիչներ, և որը կհանդիսանա մշտապես գործող հիմունքներով մարմին: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ հաճախ նրանք հանդիպում են բարդությունների միջհամայնքային մշակութային միջոցառումների կազմակերպման ժամանակ: Հաճախ ունենալով ցանկություն իրականացնելու որևէ մշակութային կամ կրթական ծրագիր՝ նրանք խուսափում են նախաձեռնություն դրսևորելուց՝ կազմակերպչական բարդություններից զերծ մնալու պատճառով: Այսպիսի օղակի առկայությունը կլուծի սույն հիմնարացը՝ հատկապես նրանց պետական ֆինանսավորման պարագայում: Հաշվի առնելով համապատասխան պետական ինստիտուտների առկայությունը՝ նման մարմին կարող է ձևավորվել արդեն իսկ աշխատանքի ներգրավված անձանցից:

- *Մշակել ֆինանսական միջոցների բաշխման նոր համակարգ:* Ինչպես գիտենք, ներկայումս ազգային փոքրամասնության համայնքներին պետական բյուջեից հատկացվում է տասը միլիոն դրամի չափով ֆինանսավորում: Մեր կարծիքով, բաշխման մեխանիզմն անտրամաբանական է, քանի որ այդ միջոցները բաշխվում են հավասար չափով բոլոր համայնքներին, մինչդեռ նրանց միջև էական քանակական տարբերություններ կան: Բացի այդ, որոշ համայնքներ ստանում են լուրջ օժանդակություն արտասահմանից, մինչդեռ մյուսները՝ ոչ: Խոսքը մասնավորապես վերաբերում է պետականություն չունեցող համայնքներին: Այդ իսկ պատճառով դրամաշնորհի բաշխման ժամանակ պետք է կիրառվի տարբերակված մոտեցում: Մի-

ջոցները բաշխելիս պետք է հաշվի առնվի համայնքի կարիքները, կարողությունները, արտաքին օգնության առկայությունը, համայնքի անդամների թիվը և այլ գործոններ:

Մյուս տարբերակը կարող է լինել գումարի բաշխումն ազգային փոքրամասնությունների համայնքների միջև մրցույթային հիմքով՝ ներկայացված ծրագրերը հաշվի առնելով: Այսպես օրինակ՝ մշակութային որևէ միջոցառում անցկացնելու դեպքում դրամաշնորհը կարող է տրամադրվել առավել հիմնավորված և հետաքրքիր ծրագրին: Դա կշահագրգռի նրանց նախաձեռնելու տարբեր մշակութային և կրթական ծրագրեր:

- *Ազգային փոքրամասնություններին տրամադրվող ֆինանսավորման ավելացում:* ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տասը միլիոն ՀՀ դրամը բավարար չէ ազգային փոքրամասնությունների բոլոր հիմնահարցերի լուծման համար, և գումարի չափը ընդարձակելու անկնհայտ կարիք կա:
- *Մարզպետարանների աշխատանքներին ներգրավել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին:* - Խոսքը մասնավորապես գնում է կոմպակտ բնակության վայրերի մասին, որտեղ նրանց ներգրավվածությունը տարածաշրջանային մարմիններում կնպաստի համայնքի շահերի ավելի արդյունավետ պաշտպանությանը և արդյունավետությանը: Կոմպակտ բնակչության վայրերում հնարավորության դեպքում աշխատանքի ներգրավել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին մարզպետարաններում:
- *Դատական և ոստիկանության վիճակագրության կատարելագործում:* Ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ առկա վիճակագրության մեջ ոչ հստակ են արտացոլված խտրականությունների հողի վրա կատարված, կամ ազգային փոքրամասնություններին առնչվող հանցագործությունները: Այդ պատճառով,

նպատակահարմար է վերանայել ոստիկանական և դատական վիճակագրության վարման կարգը, որպեսզի հնարավոր լինի դիտարկել իրավիճակն այս ոլորտներում և արձագանքել խնդիրների առաջացման դեպքում:

- *Մարդահամարի նախապատրաստական աշխատանքների անցկացում:* Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն Շրջանակային կոնվենցիայի երրորդ հոդվածի՝ *ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ պետք է ունենա այդպիսին համարվելու կամ չհամարվելու ազատ ընտրության իրավունք,* ցանկալի է ազգության, լեզվի, կրոնի վերաբերյալ հարցերը դիտարկել որպես հայեցողական, քանի որ անձը կարող է չցանկանալ հրապարակել իր էթնիկական պատկանելիությունը, ինչպես նաև մեկից ավելի տարբերակի ընտրության հնարավորություն (խոսքը գնում է խառն ամուսնությունների երեխաների մասին):

  Այդ իսկ պատճառով, մարդահամարի գործընթացը և արդյունքների ամփոփումը ճիշտ ու արդյունավետ անցկացնելու համար ցանկալի է համապատասխան մարմինների կողմից նախապես բացատրական աշխատանքների անցկացում, հնարավորության դեպքում՝ ազգային փոքրամասնությունների համայնքների ներկայացուցիչների օգնությամբ հարցաթերթիկների թարգմանություն:
- *Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավվումը մարդահամարի անցկացման գործընթացին,* մասնավորապես կոմպակտ բնակության վայրերում:

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am